

13243

31
u - 23

15 JAN 2010

ԱՆԴՐ. ՀԵՌ. ՖԻՆ. ՅԵՎ. ՑՆՏ. ԳԻՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՍՔԻՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

01

Դ. ԱԱՎԻՆՈՎԻ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Թուս. Խմբագր. Ա. ՊՈՒԶԱՆՈՎ
Թարգ. Պ. ԴԱՐԱԿԻԱՅՅԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

31
0-28

ԳՅՈՒՂՀՐԱՑ

1933

ՅԵՐԵՎԱՆ

25 SEP 2006

ԱՆԴՐ. ՀԵՂ. ՖԻՆ. ՅԵՎ. ՏԵՍ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆՍՏՎՈՒԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

31

Ս-23 Դ. ՍԱՎԻՆԱԿԻ

Մ/

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՕՅ 327 34
327

Խոհ. խմբագր. Ա. ՊՈՒԶԱՆՈՎԻ
Թարգ. Պ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

148

ՀՅՈՒՂԴՐԱՏԻ ՏՊՐԱՆ
1933

ՅԵՐԵՎԱՆ

30 SEP 2013

13243

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս դասընթացը՝ «Վիճակագրական տեսության հիմունքները» կազմված են հետևյալ ծրագրով:

Գլուխ 1. Վիճակագրական մեթոդը և վիճակագրության հասկացողությունը: Վիճակագրության գերը պլանային սոցիալական շինարարության պայմաններում:

Գլուխ 2. Վիճակագրական դիտողությունը, նրա տեսակներն ու կազմակերպումը:

Գլուխ 3. Վիճակագրական դիտողության նյութերի ամփոփումը:

Գլուխ 4. Վիճակագրական նյութերի գծագրական ձևակերպումը:

Գլուխ 5. Վարիացիոն շարքը և միջին մեծությունները:

Գլուխ 6. Հարաբերական մեծությունները և ինդեկսները, վորպես հարաբերական մեծությունների տարրեր տեսակներ:

Գլուխ 7. Ամփոփական կապերը Վորոշելու յեղանակները:

Դասընթացը լույս է տեսնելու յերկու մասով, առաջին մասը ալարունակում ե առաջին յերեք գլուխները, իսկ յերկրորդ մասը՝ մեացած գլուխները:

Դասընթացը ինկատի ունի այն անձանց, վորոնք բուրովին ծանոթ չեն վիճակագրությանը և չունեն մաթեմատիկական լուրջ պատրաստություն: Այդ պատճառով նա հանդիսանում է տարրական ձեռնարկ և տալիս է վիճակագրական մեթոդի ընդհանուր հիմունքները. այդ հիմունքներն անհրաժեշտ են հասկանալու և կատարելու այնպիսի վիճակագրական աշխատանքներ, վորոնք չեն պահանջում մաթեմատիկական վերլուծման այն բարդ մեթոդների կիրառումը, վորոնք հիմնվում են բարձր մաթեմատիկայի վրա:

Այս դասընթացն անցնելուց հետո, հանձնարարվում ե ուսանողներին անցնել Բոյարսկու, Բրանդի, Ստարովսկու, Խոախմեկու և Յաստրյամսկու «Վիճակագրության ընդհանուր տեսություն» ձեռնարկը:

ՀԵՂԻՆԱԿ

Գյուղերատի տպարան

Պատ. 266

Գլավիլս 7874 Տիբաժ 1000

ԳԼՈՒԽ I.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԱՍԿԱ-
ՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋՆԱ-
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Վիճակագրություն խոսքը սովորական կյանքում գործ է ածվում ղանազան իմաստով։ Վիճակագրություն և վիճակագրական աշխատանք ասելով, հասկանում են՝ յերբեմն այն աշխատանքները, վոր կատարում են վիճակագրական հիմնարկները և առանձին վիճակագիրները, յերբեմն առանձին գիտություն, վոր հանդիսանում է ուսումնասիրության առարկան։

Փորձենք սկզբում պարզել, վորն ե վիճակագրական աշխատանքի առանձնահատկությունները, ինչով ե տարբերվում վիճակագրական մարմինների աշխատանքը ուրիշ մարմինների աշխատանքից։

Վիճակագրական մարմինների աշխատանքի առանձնահատկությունն այն է, առաջին, վոր այդ աշխատանքը կրում է ճանաչողական բնույթ—բոլոր վիճակագրական մարմինները զբաղված են հավաքելով այս կամ այն տեղեկությունները։ Արդյունաբերական վիճակագրության մարմինները հավաքում են տեղեկություններ արդյունաբերության աշխատանքի մասին, կոռապերատիվ վիճակագրության մարմինները—կոռապերացիայի աշխատանքի մասին, տրանսպորտի վիճակագրության մարմինները—տրանսպորտի աշխատանքի մասին և այլն։ Զեա այնպիսի վիճակագրական մարմինն, վոր չզբաղվի տեղեկություններ հավաքելով, այլ խոսքով ճանաչողական աշխատանքով։

Բայց վոչ ամեն տեսակ տեղեկությունների հավաքումը և վոչ ամեն տեսակ ճանաչողական աշխատանք վիճակագրական աշխատանք են հանդիսանում։ Մենք, որինակ, վիճակագրական աշխատանք չենք համարում յերկրաբանական եքսպերիմետայի աշխատանքը, թեև նա եւ զբաղվում է տեղեկություններ հավաքելով։ Նույնպիս վիճակագրական աշխատանք չենք համարում վորեւ գիտական ինստիտուտի աշխատանք, թեև սա յել զբաղված է ճանաչողական աշխատանքով։

Հետեապես հարկավոր ե գտնել վիճակագրական աշխատանքի յերկրորդ առանձնահատկությունը, վորը տարբերում են բան տեղեկություններ հավաքող այլ աշխատանքներից:

Վիճակագրական աշխատանքի այդ յերկրորդ առանձնահատկությունն այն է, վոր այդ աշխատանքի արդյունքներն արտահայտվում են թվերով: Վիճակագրական աշխատանքի հետո ըմբռնումը սովորաբար պատկերանում ե մեր մտքում վորպես հաշվային աշխատանք: Բայց վոչ ամեն տեսակ հաշվային աշխատանք հանդիսանում ե վիճակագրական աշխատանք:

Հաշվային աշխատանք կատարում են հաշապահն ու հաշվարք, այդ աշխատանքով զբաղվում ե գտնածազահը, յերբ հաշվում ե իր դրամարկղը և այլն: Սակայն դրանից վոչ բոլոր աշխատանքները և վոչ ել միշտ կարող են լինել վիճակագրական աշխատանք:

Հետեապես վիճակագրական աշխատանքն ունի ինչ վոր առանձնահատկություններ, վորոնք տարբերվում են այդ աշխատանքը վոչ միայն ձանաչողական աշխատանքի այլ տեսակներից, այլև հաշվային աշխատանքի այլ տեսակներից: Վիճակագրական աշխատանքի այդ առանձնահատկությունները նախ այն առարկայի մեջ են, վորն ուսումնասիրվում ե վիճակագրական աշխատանքի պրոցեսում, յերկրորդ՝ այն առանձին մեթոդների մեջ, վորոնցից ոգտվում են վիճակագրական մարմիններն իրենց ձանաչողական աշխատանքը կատարելիս, և վորոնք տարբերում են այդ աշխատանքը ձանաչողական և հաշվային աշխատանքի այլ տեսակներից: Ձանաչողական աշխատանքի այդ առանձին ձեմքերի գումարը, վորոնք տարբերում են վիճակագրությունը ձանաչողական աշխատանքի այլ տեսակներից, հայտնի յե վորպես վիճակագրական մեթոդ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.

Վիճակագրական ուսումնասիրության առարկան կազմում են այսպես կոչված «վիճակագրական հավաքականությունները» կամ, ինչպես այլ կերպ ասում են «վիճակագրական կոլեկտիվները»:

Յերեք վիճակագրիրը չի հավաքում տեղեկություններ մեկ առարկայի, մեկ փաստի կամ մեկ յերեսույթի մասին: Նա միշտ հավաքում ե տեղեկություններ մի քանի առարկայի, մի քանի փաստերի, մի քանի յերեսույթների մասին, այլ խոսքով նաև հետաքրքրվում ե հավաքականություններով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ.

Յերբ խոսում ենք հավաքականության մասին, միշտ նկատի ունենք առարկաների, դեպքերի, փաստերի վորեւ խումբ: Բայց առարկաների կամ փաստերի վոչ ամեն տեսակ խումբ կարող ե լինել վիճակագրական հավաքականություն: Վիճակագրական հավաքականությունը կոչվում է միայն այն առարկաների կամ փաստերի խումբը, վորոնք միատեսակ են, ունեն ընդհանուր մի բան, նման են միմյանց: Յեթե, նպյելով լուսամուտից, տեսնում ենք տուն, ծառ, չարդախ, փայտ, գործարան, ավտոմոբիլ և այլն, ապա առարկաների այդ խումբը չի լինի վիճակագրական հավաքականություն միմիայն նրա համար, վոր այդ առարկաները միատեսակ չեն, միմիանց նման չեն: Այդ առարկաները չունեն այն ընդհանուր հատկությունը, վորը նրանց դարձներ մի կոլեկտիվ:

Ուրեմն վիճակագրական հավաքականությունը պետք է բաղկացած լինի միատեսակ առարկաներից, գայ յե կազմում նրա առաջին բնորոշող հատկանիշը:

Վիճակագրական հավաքականության յերկրորդ հատկանիշն այլն է, վոր նրա մեջ ընդգրկված առարկաները կամ փաստերը, միատեսակ լինելով հանդերձ, պետք ե վորեւ տարբերություն ունենան միմյանցից: Յեթե մեր առաջ ունենաք այնպիսի առարկաների խումբ, վորոնք վոչնչով չեն տարբերվում միմյանցից, կամ մենք չենք նկատում նրանց մեջ տարբերություն, ապա այդ խումբը չի լինի վիճակագրական հավաքականություն: Որինակ՝ վիճակագրական հավաքականություն չե առարկաների այնպիսի խումբ, ինչպես են վորորդական հրացանի մի բուռն գնդակներ, տասը կոպեկանոց արծաթե դրամի մի կապոց, վոր նոր ե շրջանառության մեջ մտած և այլն:

Վերջապես վիճակագրական հավաքականության յերրորդ հատկանիշն այն է, վոր այցպիսին կարող ե լինել առարկաների միմիայն սահմանափակ քանակ կամ խումբ: Առարկաների այն խումբը, վոր չունի ճիշտ սահման, չի լինի վիճակագրական հավաքականություն: Վերցնենք որինակ՝ առարկաների այնպիսի խումբ, ինչպես են աշակերտները կամ սովորողները: Յեթե խոսում ենք առասարակ սովորողների մասին, բայց ցույց չենք տալիս այդ խմբի սահմանները—հայտնի չի լինում, թե վոր սո-

վորողների մասին և խոսքը, մեկ դպրոցի, մի քանի դպրոցի, թե ամբողջ ՀՍԽՀ—ի և այլն։ Դրա համար ել այդպիսի իր սահմանակարությունը չի կարող լինել վիճակագրական հավաքականության մյուս անհրաժեշտ հատկանիշները, այն ե՞ւ այդ խմբի բոլոր առանձին անդամներն ունեն մի ընդհանուր զիծ (նրանք բոլորն ել առվորում են) և միաժամանակ նրանցից յուրաքանչյուրը վորեւ բանով տարբերվում է մյուսներից (նրանք ունեն տարբեր կշիռ, տարբեր բարձրություն, տարբեր սեռ, մազերի տարբեր գույն և այլն): Վորպեսզի առարկաների վորեւ խումբ լինի վիճակագրական հավաքականություն, անհրաժեշտ ե, վոր այդ խումբը սահմանագծի այնքան ճիշտ, վոր կարելի լինի հաշվել նրա մեջ մտած առարկաների թիվը։

Ուրեմն վիճակագրական հավաքականություն և կոչվում իր կազմով միատեսակ այն առարկաների խումբը, վորոնք վորեւ տարբերություն ունեն միմյանց նկատմամբ։

Բերենք վիճակագրական հավաքականության մի քանի որինակ։

Վերցնենք այնպիսի մի խումբ, ինչպիսին են վորեւ գործարանի բանվորները։ Կինի արդյոք այդ խումբը վիճակագրական հավաքականություն։ Պարզ ե կինի, վորովինետեւ ունի վիճակագրական հավաքականության բոլոր հատկանիշները, այն ե՞ւ 1. այդ խումբը բաղկացած է միատեսակ առարկաներից (այդ խմբի մեջ մտած բոլոր անձերի համար ընդհանուր ե այն, վոր նրանք բոլորն ել բանվորներ են). 2. Նրանցից յուրաքանչյուր անձ ունի մի շարք տարբերություն մյուսներից (տարիքը, գրադարձունքը, սեռը և այլն). 3. այդ խումբն ունի իր ճիշտ սահմանները և կարելի յե հաշվել նրա անդամների թիվը (խոսքը վոչ թե առհասարակ բանվորների մասին ե, այլ ճիշտ վորոշված մեկ գործարանի բանվորների մասին):

Նույն պատճառներով վիճակագրական հավաքականություն կինի նույնպես, որինակ՝ անձերի այնպիսի մի խումբ, ինչպես են ՀՍԽՀ-ի տեքստիլ արդյունաբերության բանվորները։ Բայց յեթե մենք ասենք առհասարակ «տեքստիլ բանվորներ», ցույց չտալով, թե խոսքը վոր բանվորների մասին ե, մեկ գործարանի մի քանի գործարանների, թե մի քանի յերկրների, ապա այս տեղ մենք չենք ունենա այդ խմբի ճիշտ սահմանները։

Վերցնենք ևս մի որինակ։ Այս անգամ վոչ թե առարկաների, այլ փաստերի մի խումբ, որինակ՝ ՀՍԽՀ-ի տեքստիլ գործա-

րանների բանվորների պարագուրդը 1931 թվի հունվար ամսին։ Այդտեղ ունենք միատեսակ փաստերի մի խումբ (բոլոր պարագուրդներն ունեն ընդհանուր մի բան, դրանք այն գեպքերն են, յերբ բանվորն բացակայում ե աշխատանքից այն ժամանակ, յերբ նա պարտավոր ե լինել աշխատանքի): Մյուս կողմից մեկ պարագուրդը տարբերվում է մյուսից (իր տեվողությամբ, պատճառներով և այլն). Վերջապես խոսում ենք վոչ թե առհասարակ պարագուրդների մասին, այլ ճիշտ վորոշված պարագուրդների խմբի մասին (արդյունաբերության վորոշ ճյուղում, վորոշ ամսվա ընթացքում), —սա պարագուրդների այնպիսի վորոշ խումբ ե, վոր կարելի յե հաշվի առնել։ Հետևապես փաստերի այս խումբը ևս կլինի վիճակագրական հավաքականություն։

Վերցնենք այնպիսի մի հավաքականություն, ինչպես են, որինակ՝ Մոսկայի շրջանի կտորեղենինի գործարանները։ Այստեղ ել մենք աչքի առաջ ունենք միատեսակ այնպիսի առարկանների ճիշտ սահմանված մի խումբ, վորոնք միատեսակ լինելով հանդերձ տարբերվում են միմիանցից։ Այդ հավաքականության առանձին անդամներն ունեն ընդհանուր գծեր, այն ե՞ւ նրանք բոլորն ել կտորեղենի գործարաններ են և բոլորն ել գտնվում են Մոսկայի շրջանում, բայց մյուս կողմից նրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսից իր շարժիչների ուժով, դազգանակերի քանակով, արտադրանքի չափով և այլն։

Վիճակագրական աշխատանքի առաջին առանձնահատկությունը հենց այն ե, վոր նա ուսումնակարգություններ—առարկանների բազմաթիվ խմբեր և վոչ առանձին առարկաններ։

Վորպեսզի վորոշենք այն ճեկերի կամ մեթոդների առանձնահատկությունները, վորոնց ոգնությամբ ուսումնակարգությունները կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչ խնդիրներ ե գնում իր առաջ առանձին դեպքերում մեր ճանաչողական աշխատանքը։

ՃԱՆԱՋՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՑԱԴՐԱԿԱՆ ԶԵՎԼԵՐԸ.

Համաշխարհային կյանքի ամեն մի տեսակ յերեսությունների մեր բնականությունը դնում է իր առաջ յերկու տեսակի խնդիր։

1. Նկարագրել այն, ինչ կազմում ե մեր ճանաչողական հետաքրքրության առարկան և 2-րդ բացատրել այդ։

Այն դեպքում, յերբ մենք նկարագրում ենք մեզ շրջապատող յերեսութները, մեր ճանաչողական աշխատանքն իր առաջ խնդիր և դնում պարզել մեզ հետաքրքրող առարկայի կամ յերեսութիւ այս կամ այն հատկանիշները, նրա այն հատկությունները, վորոնցով նու նման ե մի տեսակ առարկաների կամ յերեսութների և տարրերփում և մյուս տեսակի առարկաներց կամ յերեսութներից: Յենթաղբենք, ուզում ենք գաղափար կաղմել, թե ինչ բան է տրակտորը: Մեր ճանաչողական աշխատանքի արդյունքը կլինի նկարագրել ավյալ առարկան, այսինքն բնորոշել նրա հատկանիշները: Պատասխանելով հարցին, թե ինչ բան է տրակտորը, մենք ասում ենք, վոր դա մեքենա յե, ավտոմոբիլ մի տեսակը, վորը ծառայում է վարպես քաշող ուժ: Ապա թվում ենք տրակտորի մյուս հատկանիշները, մինչև վոր ստանանք լիակատար պարզ պատկերացում տրակտորի մասին: Վորպես այդ նկարագրության արդյունք, մեր մտքում ստացվում է այն առարկայի ավելի կամ պակաս չափով լրիվ և պարզ պատկերը, վորը հետաքրքրում և մեզ: Տվյալ դեպքում մենք կատարում ենք նկարագրական աշխատանք, վորի եյությունն այն ե, վոր թվում ենք առարկայի հատկանիշները:

Այդպիսի նկարագրական աշխատանք մենք կատարում ենք ամեն անգամ, յերբ կամենում ենք պատասխանել այն հարցին, թե ինչ ե ներկայացնում իրենից այս կամ այն առարկան, այս կամ այն յերեսութը, այս կամ այն դեպքը:

Սակայն յերեմն ուզում ենք պատասխանել վոչ այն հարցին, թե ինչ ե ներկայացնում իրենից այս կամ այն առարկան, այլ այն թե ինչու յե նա այդպես: Այդ դեպքում մենք առարկան վոչ թե նկարագրում ենք այլ բացատրում: Բացատրության եյությունն ե պարզել այն կապը, վոր ունի ավյալ առարկան վորեւ այլ առարկայի կամ փաստի հետ: Որինակ՝ ուզում ենք բացատրել թե ինչից ե առաջացել այսինչ տան մեջ հրդեհը, և պարզում ենք, վոր դրա պատճառը յեղել ե կրակի հետ անզգույշ վարվելը: Այսիդ հրդեհի փաստը մենք կապում ենք կրակի հետ անզգույշ վարվելու հետ:

Վիճակագրական աշխատանքը, ինչպես և ամեն մի տեսակ ճանաչողական աշխատանք կամ նկարագրում ե յերեսութները կամ պարզաբանում: Սակայն յերեսութները թե նկարագրելիս և թե բացատրելիս վիճակագրական ճանաչողությունը կիրառում է առանձին մեթոդներ:

Վիճակագրական մեթոդների առանձնահատկությունները պարզելու համար կանգ առնենք նախ վիճակագրական աշխատանքի նկարագրական ձևի վրա:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅԵՎ ԽՄԲԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ.

Դերեւում պարզեցինք, թե նկարագրել վորեւ առարկա նշանակում ե, պարզել և թվել նրա հատկանիշները:

Հատկանիշ կոչում ենք այն, ինչով այս կամ այն առարկան կամ այս կամ այն փաստը նման ե մյուսներին և տարրերփում ե մյուսներից: Յենթաղբենք պատասխանում ենք այն հարցին, թե ինչ բան է գործարանը և ասում ենք, վոր գործարանը մշակող արդյունաբերության այնպիսի խոշոր արդյունաբերական ձեռնարկություն ե, վորի մեջ հիմնական արտադրական պրեցենտները կատարվում են մեքենայի աշխատանքքի ոգնությամբ: Պատասխանելով զրված հարցին, մենք տալիս ենք գործարանի նկարագրությունը, ընդ ամին այդ նկարագրման եյությունը այն ե, վոր թվում ենք գործարանի այն հատկանիշները, վորոնք մեկ կողմից պարզում են նրա նմանությունը մյուս առարկաների հետ, մյուս կողմից տարրերում են նրան մյուս առարկաներից:

Յեթե քննենք առարկայի առանձին հատկանիշները, վոր պարզում ենք նկարագրման պրոցեսում, հեշտությամբ կարող ենք նկատել նրանց մեջ մեկ եյական տարրերություն. այդ հատկանիշներից մի քանիսը ընդհանուր են մեծ քանակությամբ առարկաների, մյուսները պատկանում են ավելի քիչ քանակով առարկաների և վերջապես յերբորդ տեսակի հատկանիշները պատկանում են միայն մեկ առարկայի: Վերադառնանք մեր որինակին և յերբ ասում ենք, թե գործարանը ձեռնարկություն ե, ապա զրանով պարզում ենք այնպիսի հատկանիշը վորը պատկանում է առարկաների մի շատ խոշոր խմբի (թե գործարանը, թե իորշը բարդացին տնտեսությունը և թե կոռպերատիվ խանութը—այդ բոլորը ձեռնարկություններ են): Յեթե ասում ենք, թե գործարանը արդյունաբերական ձեռնարկություն ե, զրանով վորոշում ենք այն հատկանիշը, վորը պատկանում է առարկաների արդեն ավելի սահմանափակ, բայց գետ ընդարձակ խմբի: Այդ հատկանիշն այլևս չի վերաբերվում իորհանտեսությանը, կոռպերատիվ խանութին և այլն, բայց նա պատկանում է թե՛ գործարանին, թե՛ անայնագործական արհեստանոցին, թե՛ հանքահորերին և

թե՛ ուրիշ արդյունաբերական ձեռնարկություններին: Յերբ առում ենք, թե գործարանը խոչոր արդյունաբերական ձեռնարկ ե, ապա պարզում ենք գործարանի այն հատկանիշը, վորը տարրերում և նրան տնայնագործական ձեռնարկություններից: Դրանով ել ավելի յենք պակասեցնում այն ձեռնարկությունների թիվը, վորոնց հետ նմանություն ունի գործարանը:

Նկարագրելով վորեն առարկա, սովորաբար սկսում ենք պարզել այն հատկանիշները, վորոնք ընդհանուր են մեծ թվով առարկաների, ապա անցնում ենք այն հատկանիշներին, վորոնք վերաբերյալ են ավելի քիչ թվով առարկաների և վերջապես յեթե ուզում ենք գաղափար ունենալ վորեն առանձին առարկայի մասին (որինակ՝ «Արարատ» գործարանի մասին), ապա վորոշում ենք այն հատկանիշները, վորոնք հատուկ են միմիայն այդ առարկային և վոչ մի ուրիշի: Այն հատկանիշները, վորոնք պատկանում են միայն մեկ առարկայի և տարրերում են այդ առարկան մյուս առարկաներից, կոչվում են անհատական հատկանիշներ: Վերջիններս տարրերյում են այն հատկանիշներից, վորոնք պատկանում են շատ առարկաների և կոչվում են իմբական հատկանիշներ:

ՍԵՐԻ ՅԵՎ ԱՄՓՈՓԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ.

Վերեսում արդեն ասել ենք, թե միճակագրական մեթոդը ուսումնակարում ե, վոչ անհատ առարկաներ, այլ կոլեկտիվներ, այսինքն՝ առարկաների խմբեր: Այստեղից պարզ ե, վոր վիճակագրական մեթոդը պետք է հետաքրքրվի առանձին առարկաների վոչ թե անհատական հատկանիշներով, այլ խմբական, այսինքն՝ այն հատկանիշներով, վորոնք բնորոշում են վոչ թե մեկ առարկա, այլ առարկաների ամբողջ խումբը: Սակայն վոչ ամեն տեսակ խմբական հատկանիշներ կարող են վիճակագրական ուսումնակարության առարկա դառնալ: Կա յերկու տեսակի խմբական հատկանիշ, նրանցից մեկ տեսակը պատկանում է տվյալ խմբի բորոք առարկաներին միևնույն չափով, նույնությամբ, մյուս տեսակը տվյալ խմբի բորոք առարկաներին, բայց վոչ նույնությամբ և նույն չափով: Այդ հատկանիշներից առաջինը կոչվում է սեռի հատկանիշ, յերկրորդը ամփոփական: Որինակ, ամեն մի գործարան ամեն մի խորհրդային տնտեսություն, ամեն մի կոռպերատիվ խանութ—ձեռնարկություն ե: Զի կարելի ասել, թե գործարանն ավելի ձեռնարկություն է քան խորհրդային

տնտեսությունը և այլն: Այստեղ մենք զործ ունենք այսպես կոչված սեռի հատկանիշի հետ: Բայց վերցնենք մի ուրիշ հատկանիշ—բանվորների քանակը, այս հատկանիշը նույնպես պատկանում է յուրաքանչյուր առանձին գործարանի, բայց վոչ նույնությամբ, բանվորների թիվը մեկ գործարանում այլ ե, մյուսում այլ: Վորպեսզի այդ հատկանիշի բազմազանությունից ստանանք ընդհանուր յեղբակացություն, հարկավոր ե գուրս բերել այսպես կոչված ամփոփականիշը: Այդպիսի ամփոփական հատկանիշը կլինի մեր որինակում բանվորների միջին թիվը արդյունաբերության վորոշ ճյուղի, վորոշ շրջանի գործարանում և այլն:

Բերենք ևս մի որինակ պարզերու սեռի և ամփոփական հատկանիշների տարրերությունը:

Յենթագրենք, ուզում ենք գաղափար կազմել վորեն վորոշ շրջանի, որինակ՝ վաղարշապատի կոլտնտեսությունների մասին: Ծանոթանալով նրանց հետ, ամենից առաջ հանդիպում ենք այնպիսի հատկանիշների, վորոնք պատկանում են բոլոր կոլտնտեսություններին առհասարակ, ինչ շրջանում ել նրանք լինեն (չքավար և միջակ զյուղացիական տնտեսությունների կամավոր միությունը միահամուռ ուժերով զարգացնելու գյուղատնտեսությունը և այլն): Դա, այսպես ասած, կոլտնտեսության սեռի հատկանիշն է: Հետագա ծանոթությունը ցույց է տալիս, վոր վաղարշապատի կոլտնտեսություններն ունեն տարրեր քանակով տնտեսություններ, տարրեր քանակով ցանք, տարրեր քանակով անսպուններ և այլն: Այստեղ հանդիպում ենք այնպիսի հատկանիշների, վորոնք միատեսակ չեն զանազան կոլտնտեսություններում, վորպեսզի անտեսությունների թվի, ցանքերի տարածության և անսպունների քանակի մասին կարելի լինի գործ մի ընդհանուր յեղբակացության, անհրաժեշտ ե դիմել ամփոփական հատկանիշների ողնությանը:

Այդպիսի ամփոփական հատկանիշներ կստանանք, յեթե ասենք, թե վաղարշատի շրջանի կոլտնտեսություններում տնտեսությունների միջին թիվը և այսքան, ցանքերի միջին տարածությունն և այսքան հեկտար, անսպունների միջին քանակն և այսքան գլուխ, ցորենի ցանքը կազմում է ցանքերի ընդհանուր տարածության այսինչ տոկոսը, բամբակինը՝ այսինչ տոկոսը և այլն:

Այդ որինակների հիման վրա կարող ենք դուրս բերել ամ-

փոփական հատկանիշների հետեւյալ առանձնահատկությունները.

1. Ամփոփական հատկանիշները բնութագրում են վոչ առանձին առարկա, այլ միատեսակ առարկաների ամբողջ խումբը: Դրանով նրանք տարբերվում են անհատական հատկանիշներից վորոնք բնութագրում են միայն մեկ ճիշտ վորոշված առարկա:

2. Ամփոփական հատկանիշները վերաբերվում են տվյալ խմբի յուրաքանչյուր առարկային, բայց վոչ նույնությամբ, դրանով նրանք տարբերվում են սեռի հատկանիշներից:

Ամփոփական հատկանիշներն ստացվում են հաշվարկման միջոցով: Յերբ ասում ենք, թե Վազարշապատի շրջանի կողմնականություններում ցանքի միջին տարածությունն ե այսքան չէկտար, ապա պարզ ե, վոր այդ յեզրակացությունը հետևանք է վորոշ հաշվարկին աշխատանքի—հաշվարկման: Հետեւապես ամփոփական հատկանիշը թվական մեծությունն ե:

Վիճակագրական մեթոդի առանձնահատկությունն այն ե, վոր նա, ձգտելով բնութագրել այս կամ այն հավաքականությունը, այդ նազատակի համար ոգտվում է ամփոփական հատկանիշներից:

Վիճակագրական աշխատանքներում գործածվում է յերկու տեսակի ամփոփական հատկանիշ—միջին մեծություններ և հարաբերական մեծություններ: Այս յերկու տեսակ ամփոփական հատկանիշների ընդհանուր գիծն այն ե, վոր նրանք ձգտում են բնութագրել ամբողջ հավաքականությունը և վոչ թե նրա մեջ մտնող առանձին առարկաները:

Վիճակագրական աշխատանքներում միջին մեծությունների ոգնությանը դիմում են այն դեպքում, յերբ տվյալ հավաքականությունը կազմող առանձին որյեկտներում կա հատկանիշի այն պիտի տարբերություն, վորը կարող ե չափվել: Որինակ՝ քանակապես տարբեր տարբեր բանվորների տարբեր քանակը առանձին գործարաններում և այն վերածվում ե մեկ արտահայտության միջին մեծություններով—դուրս ե բերվում միջին տարբերը, բանվորների միջին թիվը և այլն: Այն դեպքում, յերբ հավաքականությանը կազմող առանձին որյեկտներում հանդիպում ենք վորելիք հատկանիշի այն պիտի տարբերությունը այն առանձին որյեկտների միջին թիվը, վորը չի կարող չափվել այն պիտի տարբերությունը առանձին որյեկտների միջին թիվը, այլ հարաբերական մեծության ոգնությամբ: Որինակ՝ նշելով, վորը Յերեւանի ազգային արդարականության մեջ կան անձեր, վորոնք

իրենց մայրենի լեզուն համարում են հայերենը, թուրքերենը, ուսւերենը և այլն, առանձին որյեկտների այդ տարբերությունը վերածում ենք միատեսակ արտահայտության հարաբերական մեծությունների ոգնությամբ: Ասում ենք Յերեւանում յուրաքանչյուր հարյուր կամ հազար շնչին դալիս ե այսքան հայ, այսքան թուրք, այսքան ուսւ և այլն:

ՃԱՆԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԶԵՎԸ

Ինչպես նշել ենք վերեվում, մեր ճանաչողական աշխատանքը վոչ միշտ զբաղվում է առարկաների կամ դեպքերի նկարագրությամբ: Վոչ միշտ մենք ցանկանում ենք իմանալ թե ինչ է ներկայացնում իրանից այս կամ այն առարկան: Յերեւան մեր առաջ գնում ենք այսպիսի հարց, ինչ պահառով է տեղի ունեցել այս կամ այն դեպքը, ինչն ե պատճառը, վոր տվյալ առարկան ունի այս տեսքը և վոչ այն: Այլ խոսքով յերեւան մեր ճանաչողությունը զնում է իր առաջ խնդիր, վոչ թե պարզապես նկարագրել, այլ բացատրել այս կամ այն դեպքը, մեզ հետաքրքրող առարկայի այս կամ այն առանձնահատկությունները:

Բացատրության եյությունն այն ե, վոր մենք պարզում ենք այն կապերը, վոր կան մեր ուսումնասիրված յերևույթի և այլ յերեւույթի կամ փաստի միջին: Որինակ՝ ուզում ենք բացատրել այսպիսի յերեւույթ, ինչպիսին ե յերեխաների մահացության նվազումը ՀՄԽՀ-ի մեջ: Ուսումնասիրելով այդ յերեւույթը, գալիս ենք այն յեզրակացության, վոր յերեխաների մահացության նվազումը կապ ունի բանվորական ազգաբնակության ընակարանային պայմանների բարվոքման և նման հանգամանքների հետ: Այդ բոլոր հանգամանքներով ենք բացատրում մասնուկների մահացության նվազելու փաստը: Յեկ այդ բացատրության եյությունն այն ե, վոր մենք պարզում ենք այն կապը, վորը կա մեզ հետաքրքրող յերեւույթի և մեզ հայտնի այլ յերեւույթների միջև:

Յերեւանք մի այլ որինակ. ուզում ենք պատասխանել այն հարցին, թե ինչու այսինչ ամսվա ընթացքում ցածրացավ աշխատանքի արտագրողականությունը, այսինչ գործարանում: Ընդունենք, վոր փնտրելով մեզ հետաքրքրող փաստի պատճառները, պարզել ենք, վոր այդ փաստը բացատրվում ե նրանով, վոր վոչ զորակյալ բանվորներ են ընդունվել գործարան: Տվյալ դեպքում աշխատանքի արտագրողականության ցածրա-

ցումը գործարանում բացատրեցինք վոչ վորակյալ բանվորների հստանքով։ Այդ բացատրության եյությունն այն է, ինչպես և առաջին որինակում, վորոնք պարզեցինք մեղ հետաքրքրությերույթիների և այլ յերևույթի միջև յեղած կապը։

Բոլոր մյուս դեպքերում, յերբ բացատրում ենք վորեն բան, մենք պարզում ենք մի տեսակ յերևույթների կապը մյուսների հետ։

ՍԵՐԻ ՅԵՎ ԱՄՓՈՓԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Մեր ճանաչողական աշխատանքն առանձին դեպքում պարզում ե զանազան տեսակի կապեր։ — կապեր, վորոնք նույնն են բոլոր միատեսակ դեպքերում, և կապեր, վորոնք նույնը չեն առանձին դեպքերում։

Բերենք առաջին տեսակի կապերի որինակ։ Տաքացնում ենք ջուրը մթնոլորտային նորմալ ճնշման պայմաններում մինչ 100° ջելսիի, վորի հետեւվանքով ջուրը յեռում է։ Զրի մինչև վորոշ աստիճան տաքանալու և յնուալու միջև կա կապ, ընդունելու այդ կապն առանձին դեպքերում կատարյալ նույնն է։ ամեն անդամ, յերբ ջուրն տաքանում է մինչև 100° ջելսիի մթնոլորտային նորմալ ճնշման պայմանում, նա յեռ և գալիս։ Այդ տեսակի կապերը, վորոնք միշտ յերևան են գալիս լիակատար նույնությամբ, ընդունված ե անվանել ո եռի կապեր (նման սեռի հատկանիշների, վորոնք պատկանում են նույնությամբ միատեսակ շատ առարկաների)։ Սեռի կապերի որինակ կարող են ծառայել այն կապերը, վորը պարզում են այսպես կոչված ճիշտ գիտառությունները (Փիզիկան, քիմիան և այլն)։

Սեռի կապերի ճեղակերպութիւն ընդունված ե անվանել գիտական որինքներ։

Այդպես են որինակ՝ Փիզիկայի որենքները. լույսի ույժը հակառակ համեմատական ե տարածության քառակուսուն, ելեքտրական հոսանքի ույժը հավասար ե հոսանքի լարվածությանը բաժանված լարերի գիմադրության վրա և այլն։

Սեռի կապերին հակառակ յերբեմն մենք յերևույթները բացարելիս պարզում ենք նրանց միջև այնպիսի կապեր, վորոնք միշտ տեղի յեն ունենում տվյալ յերեվույթների ներկայության եղքում, բայց վոչ միշտ արտահայտվում են նույնությամբ։ Որինակ՝ անկասկած կապ կա հողին տրված պարարտանյութի քանակի և բերքի բարձրացման միջև։ Բայց առանձին դեպքերում բերքի բարձրացմանը միավում ե տարբեր, թեև պարար-

նյութի քանակը մեկ հեկտարի հաշվով լինում է նույնը։ Անկասկած կապ կա ձյունի քանակի և գետերի գարնան բարձրացման միջև, բայց այստեղել նույն քանակով ձյունի դեպքում գետերի գարնան բարձրացումը տեղի ե ունենում տարբեր չափով։ Թե այս և թե այն դեպքում այդ յերեվույթների միջև յեղած կապը կրում է վոչ թե սեռի, այլ անհատական բնույթ։ Յեկ յեթե մենք մեր բերած որինակներում փորձելինք արտահայտել յերևույթների միջև յեղած այդ կապը ճիշտ որինքի փորմուլայով, ապա մեր այդ փորձը չեր ունենա հաջողություն։ Մեզ անհրաժեշտ է առանձին դեպքերում նիստաված կապերն ընդհանրացնելու համար գտնել այլ միջոց։ Այստեղ մեզ ոգնության են գալիս կրկին ամփոփական մեծությունները։ Մենք տալիս ենք կապի ամփոփական դեպքի բը բը կարող ենք առել վոր այսինչ հողերում, որինակ՝ Մարդաբարբատի կավախառն ավաղային հողերում կարող ե բերքը բարձրանալ միջին թվով մեկ հեկտարից այս քան ցննաներով, յեթե տանք վորոշ քանակով պարարտացում և մշակենք այդ հողերը վորոշ տեխնիկայով։ Ինչպես ամփոփական հատկանիշների կիրառման դեպքում, այնպես ել այստեղ յերեվույթների մեջ յեղած ամփոփական կապի ճեղակերպումը բնորոշում է վոչ թե առանձին դեպքերը, այլ միատեսակ դեպքերի ամբողջ մասսան։

Բերենք դարձյալ մի որինակ, վորը պարզում ե յերեվույթների այն կապերի ամփոփական բնույթը, վորը հանդես ե բերել մասսայական հետազոտությունը։ Յենթագրենք, մեզ հաջողվել ե մասսայական հետազոտության միջոցով պարզել, վոր յոթ ժամկա բանվորական որվա անցնելը բարձրացնում ե բանվորների աշխատանքի արտադրողականությունն արդյունաբերության այսինչ ճյուղում այսքան տոկոսով։ Գալով այս յեղբակացության, մենք պարզել ենք այն կապը, վոր կա բանվորական որվա տեղողության և բանվորի աշխատանքի արտադրողականության միջև։ Բայց այդ կապը ավալ յերեվույթների միջև կրում ե ամփոփական բնույթ։ Այդ նշանակում է, վոր առանձին բանվորների աշխատանքի արտադրողականությունը կարող եր և չբարձրանալ յոթ ժամյա բանվորական որվա անցնելուց հետո։ Կարող եր նույնիսկ պատահել, վոր առանձին բանվորներ, յոթ ժամյա բանվորական որ կիրառելուց հետո, ցածրացրել են իրենց աշխատանքի արտադրողականությունը։ Վերջապես առանձին բանվորներ կարող են իրենց աշխատանքի արտադրողականու-

թյունը բարձրացնել տարբեր չափով, Դրա համար ել յերբ առում ենք, թե ամբողջ գործարանի բանվորների աշխատանքի արտադրողականությունը բարձրացել և այսքան տոկոսով, մենք միմիայն ընդհանրացնող յեղակացություն ենք հանում այն բազմազան դեպքերից, վորոնք տեղի յեն ունեցել իրականության մեջ:

Ինչպես ամփոփական հատկանիշները գործածվում են այն դեպքերում, յերբ ուզում ենք տալ վոչ թե առանձին առարկաների այլ ամբողջ կոլեկտիվի բնույթագիրը, նույնպես և ամփոփական կապերը վորոշվում են այն դեպքում, յերբ յերեսույթների միջև յեղած կապն առանձին դեպքերում կրում ե վոչ նույնանման բնույթ: Վիճակագրական մեթոդը զբաղվում է հենց այդ ամփոփական կապերի պարզաբանությամբ, յերբ հավաքականություններն ուսումնասիրելիս տալիս ե նրանց բացատրությունը:

Այդպիսով, ինչպես ամփոփական հատկանիշները, նույնպես և ամփոփական կապերը, վորոնք ստացվում են վիճակագրական աշխատանքի պլոցեսում, ներկայացնում են իրենցից ընդհանուր յեղակապություն, վորը հանվել ե և վերաբերվում ե վոչ առանձին առարկաների և փաստերի, վորոնցից բաղկացած ե վիճակագրական հավաքականությունը, այլ այդ բոլոր առարկաներին վողջ հավաքականությունն իր ամբողջությամբ:

ՏԻՄԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՎԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պարզել ենք, վոր վիճակագրական մեթոդով ուսումնասիրում են վոչ անհատ առարկաներ ու յերեսույթներ, այլ հավաքականություններ, այսինքն առարկաների, յերեսույթների մասնաները: Դրա համար ել վիճակագրական մեթոդը հաճախ բնութագրում են վորպես մասսայական համար յական հետազոտության մեջ:

Ինչից ե առաջ գալիս յերեսույթների մասսայորեն ուսումնասիրու անհրաժեշտությունը: Վոր դեպքերում չի կարելի սահմանափակել առանձին միավորների ուսումնասիրությամբ, այլ պետք ե դիմել միատեսակ միավորների ամբողջ մասսայի, նրանց հավաքականությունների ուսումնասիրությանը:

Այդ հարցին պատասխանելու համար, ամենից առաջ անհրաժեշտ ե նշել, վոր մեղ շրջապատող աշխարհի առանձին յերե-

վույթներում մենք հանդիպում ենք և նման և տարբեր գծերի: Ընդ ոմին մի քանի դեպքերում առանձին առարկաների կամ յերեսույթների միջև յեղած նմանությունը լինում է լրիվ կամ համարյա լրիվ նույնը, այսինչ մյուս դեպքերում չկա վոչ մի նմանություն, այլ կա միայն տարբերություն: Այն առարկաները կամ յերեսույթները, վորոնք նման են մյուս առարկաներին կամ յերեսույթներին, ընդունված ե անվանել տիպիկական, վոչ նման առարկաները կամ յերեսույթները—անհատական:

Դժվար չե պարզել, թե ինչու վորոշ յերեսույթներ տիպիկական են, մյուսները վոչ տիպիկական (անհատական): Յերեսույթների նմանությունը կամ միատեսակ լինելը, այլ խոսքով նրանց տիպիկականությունը վորոշվում է նրանց պատճառների նմանությամբ:

Յենթագրենք, բաց ամանի մեջ ջուրը տաքացը ել ենք մինչև 100° ցելսիֆ: Զուրը յեռ և յեկել: Տվյալ դեպքում ջրի յեռալու պատճառներն են առաջին՝ այն, վոր ջուրն ունի յեռալու հատկություն մթնոլորտային նորմալ ճնշման դեպքում 100 աստ. տաքության մեջ՝ 2-րդ՝ այն, վոր ջուրը տաքացել ե մինչև այդ աստիճանը, և 3-րդ՝ վոր մթնոլորտային ճնշումը յեղել և նորմալը: Յեթե փորձը կրկնենք նույն պայմաններում, այսինքն առաջ բերենք նույն պատճառները, կատանանք նույն արդյունքըն՝ ջուրը յեռ կգա: Միևնույն պատճառները, հանդես գալով նույն պարագաներում, տալիս են նույն հետեվանքը: Զրի յեռումը ցելսիֆ 100 աստ. տաքության մեջ մթնոլորտային նորմալ պայմաններում կլինի տիպիկական յերեսույթ, վոր տեղի յեռնում նրա առաջացնող պատճառների մշտականությամբ:

Գերցնենք տիպիկական յերեսույթի մի այլ որինակ: Յենթագրենք, վորեւ բույսի սերմ պահել ենք տաք և խոնավ միջավայրում: Վորոշ ժամանակից հետո այդ սերմերը ծլում են: Կրկնում ենք այդ փորձը մի քանի անգամ և ամեն անգամ ստանում ենք նույն հետեվանքը: Տվյալ դեպքում կրկնի մենք գործ ունենք տիպիկական յերեսույթի հետ, վորի տիպիկականությունը պայմանավորված է այդ յերեսույթն առաջացնող պատճառների մըշտականությամբ: Մասնավորապես այդ բոլոր դեպքերում պատճառ են համարվում բուսական սերմերի տաք և խոնավ միջավայրում ծլելու հատկությունը և այդ պայմանների ներկայությունը մեր բոլոր փորձերում: Բայց յենթագրենք, վոր մեկ դեպքում մեր փորձը հաջողություն չունեցավ, սերմը չծլեց:

Փնտոելով այդ անհաջողության պատճառները, պարզում ենք, յենթադրենք, վոր մեր վերցրած սերմերը կորցրել եյին ծիկու ընդունակությունը: Այդ գեղաքը, յերբ, բուսական սերմը չծիկ տաք և խոնավ միջավայրում, համարում ենք վորակն վոչ տիպիկ գեղք և նրա պատճառը վոչ մշտական:

Մեզ շրջապատող յերկույթները սովորաբար կյանքի յեն կոչում վոչ վորեն մեկ պատճառով, այլ պատճառների մի ամբողջ կոմպլեկտ, վորոնք առանձին գեղքերում հանդիս են գալիս զանազան զուգակցությամբ: Այդ կապուկցությամբ չի կարող լինել յերկույթների բացարձակ նույնություն, կամ միայն ավելի կամ պակաս չափով նմանություն: Այն յերկույթները, վորոնց մեջ գերազում է նմանությունը, անվանում ենք տիպիկական յերկույթներ: Այն յերկույթները, վորոնց մեջ գերազում են այնպիսի գծեր, վորոնք տարբերում են այդ յերկույթները մյուս բոլոր յերկույթներից, անվանում ենք անհատական յերկույթներ:

Վերցնենք վորակն որինակ այնպիսի յերկույթ, ինչպիսին ե ծառի աճման պրոցեսը: Յենթադրենք, միհնույն տարիքի միքանի ծառերի աճման այդ պրոցեսի արդյունքը՝ համեմատել ենք իրար հետ: Յեթե զրանց աճումը կատարվել ե կատարյալ միատեսակ պայմաններում, ապա և դրա արդյունքը—ծառերի բարձրությունը և հաստությունը կլինեն միատեսակ, այսինքն՝ մեկ ծառի չափը կլինի տիպիկ՝ մյուսների համար: Բայց յեթե աճման պայմանները յեղել են տարբեր, այլ խոսքով, յեթե ծառի աճումը պայմանավորող պատճառները տեղի յեն ունեցել զանազան զուգակցությամբ, ապա կհանդիպենք տարբեր արդյունքի—միհնույն տարիքի ծառերը կունենան տարբեր բարձրություն, տարբեր հաստություն և այլն:

Վորչափով մեզ շրջապատող յերկույթներն առաջ են գալիս վոչ թե մեկ պատճառով, այլ զանազան պատճառների ամբողջ զուգակցությամբ, վորոնցից մի քանիսը ունենում են մշտական ընույթ, մյուսները ընդհակառակը՝ փոփոխական շատ հաճախ մի քանիսն այդ յերկույթներից կլինեն տիպիկական, մյուսները անհատական: Վերցնենք նույն յերկույթ—ծառի աճումը: Այդ բարդ յերկույթի մեջ կան և տիպիկական գծեր (ամեն մի ծառ աճում ե, տարին տալով մի շրջագիծ, ամեն մի ծառ աճում ե տարգա վորոշ յեղանակներին և այլն) և անհատական գծեր (ծառերից մի քանիսն աճում են արագ, մյուսները

գանդաղ, միհնույն ծառի աճումը զանազան տարիներում լինում ե տարբեր և այլն):

Ուրեմն տիպիկական յերկույթների կամ յերկույթների տիպիկական հատկությունների առանձնահատկությունն ե կազմում այդ յերկույթների կամ նրանց առանձին հատկությունների նմանությունը, վորը զանազան գեղքերում ավել կամ պակաս չափով մոտենում ե լրիվ նույնությանը: Ընդհակառակն անհատական յերկույթների(կամ անհատական հատկությունների) առանձնահատկությունն ե կազմում նրանց ավելի կամ պակաս չափով ուժեղ տարբերությունն առանձին գեղքերում:

Ի՞նչո՞ւ ՅԵՐԵՒԵՄՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՎՈԶ ԱԹԱՆՁԻՆ ՅԵՐԵՎԱՆԻՑԹՆԵՐԸ, ԱՅԼ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Մեզ շրջապատող յերկույթները ճանաչելու համար ուսումնասիրում ենք տիպիկական և անհատական յերկույթները զանազան յեղանակներով: Յերբ ուսումնասիրում ենք տիպիկական յերկույթները, աչքի առաջ ունենք այն յերկույթները, վորոնք նման են մեկը մյուսին: Այդ գեղքում տիպին ծանոթանալու համար բավական ե հետազոտել առանձին յերկույթ, Վերցնենք տիպիկական յերկույթի այնպիսի որինակ, ինչպիսին ե ջրի յեռ գալը, յերբ նա տաքանում ե բաց ամանում մինչև 100° ցելսիի:

Այդ յերկույթն ունի ինչ վոր մշտական պատճառ, այն ե ջրի այն հատկությունը, վոր նա զոլորշիանում ե վորոշ աստիճան տաքության գեղքում: Վորչափով գիտենք, վոր այդ պատճառը միշտ գոյություն ունի, կարիք չկա ամեն անդամ ջուրը յեռացնել, վորպեսզի իմանանք ջրի յեռան աստիճանը: Դա տիպիկական յերկույթ ե, կարիք չկա հետազոտել մի քանի անգամ, վորպեսզի պարզ գաղափար կազմենք նրա մասին: Վերցնենք մի ուրիշ որինակ: Ուզում ենք ուսումնասիրել մարդու կառուցվածքը և դրա համար բաց ենք անում դիակը: Քանի վոր մարդու մարմնի կառուցվածքը տիպիկական յերկույթ ե, բավական ե բաց անել մի դիակ, վորպեսզի իմանանք թե ինչպիս են դասավորված մարդու մարմնի անդամները, ինչ արտաքին տեսք ունեն նրանք, ինչպիս են կապված ներքին տնդամները միմյանց հետ և այլն: Ընդհակառակը, յերբ ուսումնասիրում ենք անհատական յերկույթները, բավարար չե կատարել առանձին յերկույթի հետազոտումը. մենք պետք ե այստեղ դիմենք մասսայական

հետազոտման: Որինակ ուզում ենք իմանալ, ինչպես են աճում, այսինքն ինչ բարձրություն ունեն 7 տարեկան յերեխաները: Տվյալ դեպքում գործ ունենք վոչ տիպիկական, այլ անհատական յերեսույթի հետ: Պատասխանել այդ հարցին չենք կարող, յեթե չափենք յոթ տարեկան միայն մեկ յերեխայի բարձրությունը. պետք ե չափենք մի քանի յերեխայի բարձրությունը գուրս բերենք միջին մեծությունը և ասենք, վոր մասսայական հետազոտման հիման վրա գտել ենք, վոր յոթ տարեկան յերեխաները միջին թվով ունեն այսքան բարձրություն: Այստեղ ստիպված ենք կատարել վոչ թե մեկ հետազոտում, այլ մասսայական, կազմել հավաքականություն և նրան բնութագրելու համար հանել ամփոփական հատկանիշները:

Եերենք նորից մեկ որինակ: Ցանկանում ենք պատասխանել այն հարցին, թե հողին խառնած արհեստական այսինչ պարաբանյութն ինչ ազդեցություն ե թողնում բերքի բարձրացման վրա: Այս յերեսույթն ել տիպիկական չե, այլ անհատական ե: Պարաբանյութի ազդեցությունն առաջին դեպքում կինի ուժեղ կամ թույլ դա կախված ե մի շարք պատճառներից—հողի հատկությունից, վորի հետ պարաբանյութ են խառնել, ողյերեսույթաբանական պայմաններից, հողի մշակման վորակից և այլն: Հետևապես դրված հարցին պատասխանելու համար, պետք ե կատարենք մի շարք հետազոտում և այդ բազում հետազոտումների հիման վրա հանենք ընդհանուր յեղակացություն, թե հողին խառնած այսքան քանակով պարաբանյութը բարձրացնում ե բերքը միջին թվով այսքան տոկոսով:

Այդպիսով մեր բերած որինակներից պարզվում ե, վոր մենք դիմում ենք մասսայական վոչ առանձին առարկաների կամ փառատերի, այլ հավաքականության հետազոտման և միջին մեծությունների ոգնությանն այն դեպքերում, յերբ ուզում ենք ուսումնասիրել անհատական յերեսույթները, նպատակ ունենալով հանել ընդհանուր յեղակացություն այդ մեծաքանակ հետազոտումներից:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆ ՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Վիճակագրական մեթոդով իրագործվում ե այն, վոր ստանում ենք ընդհանրացնող յեղակացություն այն անհատական յերեսույթների մասին, վորոնք կազմում են հավաքականություն,

այսինքն լինելով իրարից տարրեր, ունեն ինչ վոր ընդհանուր բան և կազմում են մի կոլեկտիվ:

Թե ինչ բան ե վիճակագրական մեթոդը, հիմք ունենալով այդ մեթոդի այն առանձնահատկությունները, վորոնց մասին խոսել ենք, կարելի յե տալ հետեւյալ բնորոշումը—վիճակական թողարկան մեթոդը հավաքականություն կազմող անհատական յերեսույթների ուսումնասիրության այն յեղանակն ե, յերբ այդ հավաքականությունները բնութագրվում են ամփոփական հատկանիշներով և պարզվում են այդ յերեսույթների մեջ յեղած ամփոփական կապերն ու ամփոփական կապերն կառավագան կախված են կախումները:

Պարզելով վիճակագրական մեթոդի եյությունը, հեշտ ե պատասխանել, թե ինչ բան ե վիճակագրությունը: Վերևում արցեն նշել ենք, վոր վիճակագրական բառը գործ ե ածվում վորպես գործնական աշխատանք, վորով զբաղվում են վորոշ մարմիններ և վորպես գիտություն, վոր դառնում ե ուսումնասիրության առարկա: Վիճակագրական մեթոդի բնորոշման հիման վրա վիճակագրությունը վորոշում ենք վորպես գործնական աշխատանք ուսումնասիրելու կյանքի յերեսույթներն անաչողական այն ձեմերով, վորոնք ըրուրը միասին վեր առած կոչվում են վիճակագրական մեթոդ: Բայց վորպեսզի ճիշտ կիրառենք այդ ձեմերը հարկադր ե իմանալ այդ ձեմերը, հարկադր ե ուսումնասիրել նրանց: Այդ տեղից հետեւյում ե, թե վիճակագրությունը գիտություն ե, կամ այլ խոսքով վիճակագրության տեսությունը գիտություն ե, վորը տալիս ե և հիմնավորում ե վիճակագրական մեթոդի ձևերը:

Յերբ վիճակագրությունը համարում ենք անհատական յերեսույթների ուսումնասիրության ձևերի մասին գիտություն, զբանով խիստ սահմանափակում ենք նրա ցրջանը: Վիճակագրությունը, վորպես գիտություն մեզ սովորեցնում ե, ինչպես ուսումնասիրել վիճակագրական հավաքականությունները, բայց վոչինչ չի ասում այդ հավաքականությունների մասին: Դրա համար ել ճիշտ չի այն վորոշումը, թե վիճակագրությունը գիտություն ե հասարակական կյանքի յերեսույթների մասին. Վիճակագրությունը միայն ծանոթացնում ե մեզ հասարակական կյանքի յերեսույթների մասին անաչողականություններ ձեռք բերելու յեղանակներից մեկի հետ:

Մյուս կողմից պետք է նկատել, վոր վիճակագրական մեթոդը (այլ խոսքով՝ ուսումնասիրության վիճակագրական յեղանակը) զորածագրվում է վոչ միայն հասարակական յերևույթների ուսումնասիրության համար: Նա գործադրվում է ամեն տեղ, վորտեղ հանդիպում ենք յերևույթների միատեսակության, վորի սահմաններում պատահում են նրանց անհատական առանձնահատկությունները: Վիճակագրական մեթոդը գործադրվում է բնության յերևույթներն ուսումնասիրելիս (ողյերեւույթաբանական պայմանների վիճակագրություն), տեխնիկայի մեջ և ճանաչողական աշխատանքի մի շարք այլ ասպարեզներում:

Ամեն տեղ, վորտեղ գործադրվում է վիճակագրական մեթոդը, նա ծառայում է միայն վորպես ճանաչողական աշխատանքի գործիք, նրա գերը—սպասարկող դեր է, նա հետազոտողի ձեռքում միայն գործիք է:

ԻՆՉՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԼԱՅՆ ԶԱՓԵՐՈՎ ԿԻՐԱՌՎՈՒՄ Ե ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅՑՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄ- ՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.

Կտ մի հանդամանք, վորն անհրաժեշտ է դարձնում վիճակագրական մեթոդի առանձնապես լայն կիրառումը—ուսումնասիրելու հասարակական և մասնավորապես տնտեսական կյանքի յերևույթները: Այդ հանդամանքն այն է, վոր կյանքի յերևույթների հենց այդ բնագավառում յերևույթներն ունեն առանձին բաղմանանություն և մեծ անհատականություն, ունենալով նաև նմանություն:

Վերցնենք թեկուղ այնպիսի յերևույթ, ինչպիսին է հացի բերքը: Բերքի բարձրությունն առանձին հողամասիրում միատեսակ չե, վորովհետեւ դա կախված է մի շարք զանազան պատճառներից: Սակայն չնայած այդ բաղմանանության, յուրաքանչյուր շրջանի կամ անտեսությունների յուրաքանչյուր խմբի համար կան ինչ վոր ընդհանուր պատճառներ, վորոնք, այսպես ասած «տոն» են տալիս» և առաջ բերում այդ բաղմանանության մեջ վորոշ նմանություն: Այստեղ պարզ է, մենք գործ ունենք տնտեսությունների վորոշ կոլլեկտիվների հետ: Վերցնենք մի ուրիշ որինակ, բանվորների աշխատանքի արտադրողականությունը: Առանձին բանվորներ ունեն աշխատանքի տարբեր արտադրողականություն, վորը բացատրվում է տարբեր պատճառներով, բայց կան և ընդհանուր պատճառներ, վորոնք առաջացնում են վորոշ

միատեսակություն, այդ բանը տալիս է մեզ հնարավորություն այստեղ ևս կիրառել վիճակագրական մեթոդը, կազմելով հավաքականությունները և դուրս բերելով ամփոփական հատկանիշը—աշխատանքի միջին արտադրողականությունը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Վիճակագրական աշխատանքի բնույթը վերջնականապես պարզելու համար, անհրաժեշտ է վիճակագրության հասկացողությունը, վորպես գործնական աշխատանք, վորը ուսումնասիրում է վիճակագրական մեթոդի ողնությամբ կյանքի յերևույթները, սահմանագծել նրան հարակից այլ գործնական աշխատանքի տեսակներից:

Վիճակագրական մեթոդը գործում է ամփոփական հատկանիշներով: Ամփոփական հատկանիշներն արդյունք են հաշվային գործողության: Հետեվաբար այս կամ այն թվական տվյալների հաշվելը վիճակագրական աշխատանքի անհրաժեշտ մասն է կազմում: Բայց թվական տվյալների հաշվելով, վորոնք արտացոլում են կյանքի այս կամ այն յերևույթների մեծությունը, զրազվում են վոչ միայն վիճակագրությունը, այլ և հաշվառման այլ ճյուղեր:

Սովորական կյանքում մենք ծանոթ ենք հաշվառման հասկացողությանը, վորը պատկերացնում ենք վորպես թվական տվյալների հաշվում: Թվական տվյալների հաշվելով զրազվում են հաշվապահությունը:

Ինչու և տարբերվում վիճակագրական աշխատանքը հաշվառման աշխատանքից և վիճակագրությունը. հաշվապահությունից:

Հաշվառում ասելով, ընդհանրապես համեստ ենք այն, վոր պարզում ենք մեզ համար հետաքրքրություն ներկայացնող առանձին փաստեր և նրանց հետագա հաշվելը—ամփոփելը: Յերբ խոսում ենք ավտոմոբիլների փողոցային շարժման հաշվառման մասին, այդ աշխատանքի մեջ մենք պատկերացնում ենք յերկու հետեվողական գործողություն: Նախ պարզել յուրաքանչյուր ավտոմոբիլի տվյալ փողոցով անցնելու փաստը և յերկրորդ՝ հաշվել ընդհանուր վորքան ավտոմոբիլ են անցել: Նույն իմաստով մենք խոսում ենք, որինակ՝ բանվորների կամ ծառայողների հաշվառմանքի գնալու հաշվառման մասին, գործարանում ծախսված վառելիքի հաշվառման մասին, խանութում յեղած ապրանքի հաշ-

պահությունը պետք է հաշվի առնի իդյալական ճշտությամբ նյութական արժեքների յելքի և մուտքի յուրաքանչյուր առանձին փաստ: Յեզ այդ առանձին փաստերը հանդիսանում են հաշվապահության համար ուշադրության կենտրոնը:

Այս, վոր հաշվապահությունն առանձին մոտեցում ունի գեղակա անհատական փաստերը, այդ տեսակետից նրա տարրերությունը վիճակագրությունից կարելի յի պարզել հետեւյալ որի նակալով:

Ենթադրենք, հաշվապահությունը տանում է բանվորների աշխատավարձի հաշվառումը: Նրա համար հետաքրքրություն են ներկայացնում աշխատավարձի վոչ միայն ընդանուր քանակը, վոր ստացել են բանվորներն այսինչ ամսին, և աշխատավարձ ստացած բանվորների թիվը, այլ և անհրաժեշտ է զբանցել թե վոր քան աշխատավարձ և ստացել յուրաքանչյուր բանվոր առանձին առանձին—կիրակոսյանը, Մարկոսյանը և այլն: Հաշվապահությունը չի կարող այդ բոլորը չգրանցել, վորովհետեւ, այս կամ այն անձին դրամ վճարելով կամ մարում և ձեռնարկության պարտքը այդ անձին (յեթե վճարվում է կատարված աշխատանքի համար), կամ դարձնում է այդ անձին ձեռնարկության պարտապան (յերբ տրվում է կանխավճար ի հաշիվ հետագա աշխատանքի): Այդտեղից պարզվում է և այն, վոր հաշվապահության զրանցումները պետք են ունենան իդյալական ճշտություն:

Այլ մոտեցում ունի նույն յերկույթի հաշվառման նկատմամբ վիճակագրությունը: Վիճակագրության համար հետաքրքիր չե, թե ինչ աշխատավարձ են ստացել Մարկոսյանը, կիրակոսյանը և այլն, նրան հարկավոր է հանել ընդհանրացած յեղակացություն—թե վորքան է բանվորի միջին աշխատավարձը: Վիճակագրությունը կարող է բավարարվել նրանով յեթե, ունենա տվյալ, վոր բանվորի միջին աշխատավարձն այսինչ ամսում յեղել են, ասենք, 80 ռ. 45 կ.:

Հաշվապահության համար այդ թիվը գործնական արժեք չունի, վորովհետեւ այդ թիվը չի պարզում, թե վորքան և ստացել յուրաքանչյուր առանձին բանվոր: Միանգամայն հասկանալի յե, վոր վիճակագրությունը ձգտելով ունենալ ընդհանրացած յեղակացություն, կարող է պետանջ չունենալ առանձին զրանցումների իդյալական ճշտության: Յեթե առանձին բանվորի աշխատավարձը հաշվելիս, կատարվի փոքրիկ սխալ, դա եյտան աղքեցություն չի ունենա միջին աշխատավարձի մեծության վրա:

Ընդհակառակը՝ հաշվապահության համար առանձին տվյալների յուրաքանչյուր անհրաժեշտությունն ունի որհասական նշանակություն, վորովհետեւ այդ սխալն այս կամ վնասն են հացնում հիմնարկությանը կամ բանվորին:

Ուբեմն հաշվապահության ու վիճակագրության հիմնական տարրերությունն այն ե, վոր հաշվապահության հետաքրքրության կենտրոնն են կազմում անհատական փաստերը, իսկ վիճակագրական հետաքրքրության կենտրոնը՝ ընդհանրացած յեղակացությունը: Սակայն սխալ կլիներ վիճակագրական հաշվառումը, վորպես անձիշտ հաշվառումը, հակառպել հաշվապահական վորպես իդյալական ճիշտ հաշվառմանը: Հաշվառման ճշտությունն իդյալ ե և վիճակագրության համար: Անկասկած ե միայն այն, վոր վիճակագրական աշխատանքի մեջ անհրաժեշտությունն էի կարող ունենալ այն հետեւյանքները, ինչպես հաշվապահության մեջ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ՄԵԶ

Վիճակագրական մեթոդը ծնունդ է առել և իր սկզբնական գարգացումը ստացել ե պետական կամ ավելի ճիշտ, հասարակական կյանքի յերկույթների ուսումնակրթման բնագավառում: Վիճակագրական ընդհանրացումների հենց հիմքը—մասսայական հետազոտումը դարձնում է վիճակագրական մեթոդն ամենալավ միջոցներից մեկը, ներկայացնելու ինֆորմացիա պետությունը գեկավարող մարմիններին այն յերկույթների մասին, վորոնք հանդիսանում են պետական իշխանության ներգործության առարկա, կամ իրազորելու այս կամ այն քաղաքական ձեռնարկումները: Ազգաբնակության ցուցակագրումները—մարդահամարները, վորոնք նպատակն է յեղել պարզել այն անձերի քանակը, վորոնք ընդունակ են զենք կրելու, հարկ վճարելու, այս կամ այն աշխատանքը կատարելու, հանդիսանում են վիճակագրական աշխատանք և հայտնի յեն մարդկային հասարակական կյանքի ամենահին շրջաններում:

Ավելի ուշ, յերբ պետական կյանքում նշանակություն են ստանում այլ սոցիալական կազմակերպված խմբեր—բանվորական միություն, կապիտալիստական ձեռնարկություն, ֆեոդալական ցեխ, վիճակագրությունը զալիս ե ոգնության և այդ կազմակերպություններին, վիճակագրության միջոցով նրանք ծանու-

Թանում են այս կամ այն յերեսույթներին կամ պրոցեսներին, վորոնք տեղի յեն ունենում նրանց գործնեյության սահմաններում:

Այդպես են առաջ յեկել սոցիալական վիճակագրության սկզբում պետական և ազա այլ ձեռը:

Ներկայում վիճակագրական աշխատանքները լայն չափերով զարգացած են ինչպես ԽՍՀՄ-ի մեջ, նույնպես և կապիտալիստական յերկրներում: Բայց հսկայական տարբերություն կայդ աշխատանքների ինչպես կազմակերպման, նույնպես և նրանց խնդիրներում մեղ մոտ, Խորհրդային Միության մեջ երուժուական պետությունների մեջ: Կապիտալիստական յերկրներում վիճակագրությունը տալիս ե բուրժուազիային այն տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են խոշոր կապիտալիստական տնտեսությունները հաջող զարգացնելու համար և հենց դրանով ել ավելի շահագործելու պրոլետարիատին, ընդ վորում այդ տեղեկությունները կրում են «առևտրական գաղտնիքի» բնույթ պաշտպանելով կապիտալիստական ձեռնարկությունները կողմնակի հսկողությունից: Վիճակագրական հետազոտությունների վերլուծման առանձնահատկությունը կապիտալիստական յերկրներում այն է, վոր ձգտում են հիմնավորել կապիտալիստական կարգերի «կայունությունը և անսասան լինելը, տնտեսական ճգնաժամերի ժամանակոր և ռազմական» լինելը, «նախագուշակելը» ճգնաժամի լուծարքի մոմենտն ու «բարորութան» վերահասու շրջանը: Այդ պայմաններում վիճակագրական մեթոդը ոգտագործվում ե վորպես միջոց քողարկելու աշխատավագր լայն մասսաներից ձեռնարկությունների իրական տնտեսական դրությունը:

Միանգամայն հասկանալի յե, վոր պետական վիճակագրության բնույթն ու վորոշակի բովանդակությունն ուղղակի համապատասխան են տվյալ յերկրի սոցիալական հասարակակարգի բնույթին և այն վորոշակի խնդիրներին, վոր ձգտում են իրագործել պետական իշխանության մարմինները: Այդ հանգամանքով ել լիովին բացատրվում ե վիճակագրական աշխատանքների այն բացառիկ ուժեղ թափը, վոր իրականություն և ներկայիս ԽՍՀՄ-ի մեջ:

Յուրաքանչյուր յերկրի վիճակագրության կազմակերպումն ու զարգացումը, կարգում ենք Մ. Ն. ՍՄԻՏԻ գրվածքներից մեկում, —ուղղակի կապված են նրա ժողովրդական տընտեսության զարգացման ընթացքի հետ: Դրանով ե վորոշվում

վիճակագրության դերը և Խորհրդային Միության մեջ պլանային տնտեսության այդ յերկրում, վորտեղ տնտեսական զարգացման ընթացքը նախագծվում ե վաղորոք և յերկրի տնտեսական որգանիզմն ուսումնասիրվում ե և ուղղություն ստանում վորպես մի ամբողջություն: Դրա համար միանգամայն հասկանալի յե, վոր վիճակագրությունը ԽՍՀՄ-ի մեջ հանդիսանում ե խիստ պատասխանատու պետական աշխատանք:

Պլանավորման եյությունն այն է, վոր վորոշ ժամանակի համար նշում են մի շարք միջոցառումներ, վորոնց միջոցով կարելի յե իրագործել, ըստ մաքսիմալ հնարավորության մոտենալ վերջնական նպատակին, վորը տալիս ե պլանավորման ընդհանուր ուղղությունը: ԽՍՀՄ-ի պլանային տնտեսության համար այդ հիմնական նպատակը կազմում ե սոցիալիզմի կառուցումը: ԽՍՀՄ-ի պլանային մարմինների խնդիրն ե ուրվագծել հաջորդական ետապները մոտենալու այդ վերջնական նպատակին. այդ խնդրի իրագործման մեջ անհրաժեշտ ե վիճակագրության ակտիվ մասնակցությունը:

«Պլանավորման աշխատանքը Խորհրդային Միության մեջ, —ասում ե հիշյալ հեղինակը, —գնում ե յերեք գծով. զլիավոր կամ զեներալ պլան, հեռանկարային հնգամյա պլաններ և տարեկան ստուգիչ թվեր, վորոնք տալիս են տնտեսական զարգացման տեմպերը յուրաքանչյուր շրջանի համար: Զարգացման բոլոր պլաններն իրենց առաջ դնում են ժողովրդական տնտեսության վերափոխման վորոշ վորակական խնդիրներ, արտահայտելով այդ վերափոխման շարժումը կամ տեմպը քանակական մեծություններով: Դրանով ե վորոշվում մեծ մասամբ վիճակագրական աշխատանքի ծավալը: Տեմպերը վորոշելու համար վիճակագրությունը տալիս ե սկզբնական նյութը, վորը քանակորեն բնորոշում ե վորակական պրոցեսները և փնտրում ե ցուցանիշները, վորոնք վորակական յերեսութներին տալիս են քանակական ձեկագորում:

Ուրվագծված կոր գծում վիճակագրական ցուցանիշը հանդիսանում ե յելման կետ: Պլանավիկի դատողությունն են տարեկան զարգացման բնույթի մասին նույնպես հենցում ե վիճակագրական այն կոր գծի վրա, վորը նկատում ե պրոցեսն այնպես, ինչպես յեղել ե: Վերջապես և զարգացման առանձին տարրերի փոխարարերությունն իր հերթին բնորոշվում ե վիճակագրական կոեֆֆիցիենտներով»:

Վիճակագրության ոգնությունը պետական մարմիններին անհրաժեշտ է վոչ միայն ժողովրդական անտեսության զարգացման պլանը կազմելու գործում, այլ և վոչ պետական չափով նաև անհրաժեշտ է այն տնտեսական միջոցառումների հետագա իրավուրժման շրջանում, վորոնք նշված են պլանով:

Վիճակագրությունը պետք է տա յերկրի կյանքը զեկուվարող մարմիններին մշտական տեղեկությունն, ինֆորմացիա, թե ինչպես ե փաստական դրությունը պլանային շինարարության յուրաքանչյուր մասում, իրավուրծվում և արդյոք նշված պլանը և վորքան հաջող, նա պետք ե նյութ մատակարարի պատասխանելու այն հարցին, թե վորոնք են պլանների չիրավուրժման պատճառները վորոշ կետերում և ինչ հանդամանքներ հնարավոր են զարձրել պլանային առաջադրանքների ընդլայնումը մյուս կետերում: Վիճակագրությունը դառնում է անհրաժեշտ զենք յերկրի տնտեսական կյանքը կառավարելու գործում: Ներկայումս, յերբ ավարտված ե սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, վիճակագրությունը ձեռք է բերում առանձնապես մեծ նշանակություն: Մեծ շինարարության յուրաքանչյուր մաս պահանջում է զեկավարող մարմիններից անընդհատ լրագիր ուշադրություն:

Ահա թե ինչու հատկապես ներկայիս ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի աշխատանքներին անընդհատ հետեւ վելը ստանում է առանձնապես կարևոր նշանակություն:

Այդ բանի արտաքին արտահայտությունն այն հետագրային հաղորդումների զարգացումն է արդյունաբերության, գյուղատնտեսության, արանսպորտի աշխատանքների մասին, վորոնց ամփոփումները տպվում են մեր բոլոր մեծ թերթերում: Վիճակագրական մարմինների աշխատանքը, վորոնք կազմակերպում և մշակում են այդ հաշվետվությունները ստանում են խիստ պատասխանատու աշխատանքների նշանակություն: Յերեմըն շատ տարածված եր պրոֆեսիոնալ վիճակադիրների շրջաններում հետևյուղ դարձվածքը. «Վիճակագրությունը չի ճանաչում կուսակցությունն, բայց բոլոր քաղաքական կուսակցությունները պարտավոր են հիմնավորապես ծանոթ լինել վիճակագրական տվյալներին»:

Այդ արտահայտությունը, վորը բնորոշում է վիճակագրության կեղծ անկուսակցականությունը կամ քաղաքականությունից և զեղծ լինելը բուրժուական հասարակակարգի շրջանում, զարձիւ

անախրոնիզմ, սոցիալիստական շինարարության ժամանակակից շրջանում ԽՍՀՄ-ի մեջ և դասակարգային պայքարի սրման շրջանում յերկրագնդի վրա մյուս պետություններում: Անաչառ դիտողի դերը, վոր ուներ վիճակագիրը դասակարգային պայքարի համեմատաբար խաղաղ շրջանում, վերածվում է ակտիվ մասնակցողի դերի հասարակական կյանքի նոր ձևերի կառուցման գործում:

Վիճակագիրը չի կարող ունենալ անաչառ դիտողի դեր. վիճակագրական աշխատանքի յուրաքանչյուր աղյուսակ, թվական տվյալների վերլուծման յուրաքանչյուր յեղակացություն, միշտ կրում է իր վրա ավելի կամ պակաս չափով նրա հեղինակի զաղափարախոսության կնիքը: Դասակարգային այդ գաղարախոսությունից ազատ չեն յեղել և մինչհեղափոխական շրջանի վիճակագրական աշխատանքները, ինչպես այդ ապացուցել և վ. ի. լենինը վիճակագիր-նարոդնիկների աշխատանքները քննադատելիս («Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»):

Այդ բանը պետք է շեշտել և մեր ապրած շրջանում: Այդ պայմաններում զարմանալի չե, վոր սոցիալիստական շինարարության համար մի շարք վնասարար կազմակերպություններ և առանձին վնասարարներ ոգտագործում են ին վիճակագրությունն իրենց վնասարար աշխատանքի համար:

Ոգտագործելով տնտեսական յերկույթների վերլուծման այն ձեւերը, վորոնք մշակվել են մասնատիրական—կապիտալիստական կարգերի պայմաններում, սոցիալիստական շինարարության վնասարարները ձգտում ենին ապացուցել զարգացման այն ինտենսիվ տեմպերի անհնարին և սխալ լինելը, վրոնք այսոր վոչ միայն հնարավոր դարձան, այլ և փաստ:

Հեղափոխական պրոլետարիատի ստեղծագործ ուժը ջարդու փուլը արեց վնասարարների փորձերը՝ հետ դարձնելու պատմության անիվը. նա խորտակեց և նրանց տեսությունը: Բայց վիճակագրությունը հականեղափոխության համար ոգտագործելու փորձերի այդ փաստն ինքնին զգուշացնում է և պարտավորեցնում բոլորին, վորոնք իրենց աշխատանքի ձևերն ու մեթոդները, յուրաքանչյուր աշխատավորի, վոր ունի այս կամ այն առնչությունը,

Վիճակագրական աշխատանքի հետ, պարտականությունն են միայն տիբապետել վիճակագրական աշխատանքի այս կամ այն ձևերին, այլ և հասկանալ այդ ձևերի իմաստը:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՅԵՎ ԱՌԵԱ- ԼԻՍԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ.

Խնդիրների այն առանձնահատկությունները, վոր ունի հաշվառման յուրաքանչյուր առանձին տեսակը, պատճառ են դարձել յերեք տեսակի հաշվառման զուգահեռ և ինքնուրյուն դոյության—հաշվապահական, գործառնական և վիճակագրական: Հաշվառման այդ յերեք տեսակի զուգահեռ դոյությունը, վոր չի վերացված մինչեւ որս, պետք է համարել անսորմալ յերկույթ, վորովհետև տեղիք և տալիս միենույն հարցի վերաբերյալ ունենալ հակասական տվյալներ:

Հաշվապահական հաշվառումը, վոր կրում է իրավական փաստաթղթի բնույթ, գերազանցում է իր ճշտությամբ: Այդ են նրա անկասկածելի արժանիքը, բայց նա ունի վորոշ, մինչև այժմ չվերացված թերություններ: Այդ թերություններն են դանդաղիոտությունը, և վորոշ սպահպանողականությունը, մասնագիտական—կապիտալիստական կարգերի պայմաններից կտրը վելու անկարողությունը, վորտեղ ծնունդ և առել և զարգացել այդ հաշվառումը: Մինչև այժմ հաշվապահական հաշվառումը հետաքրքրվում է գրեթե բացառապես արժեքային կատեգորիաներով—գույքի արժեքը, ծախքերի գումարը, ոգուտի կամ վրանասի գումարը և այլն: Այնինչ, ժամանակակից պայմաններում առանձին հետաքրքրություն և ստանում յերեսույթներին և պրոցեսներին հետեւելու ուղինելը, վորոնք արտահայտվում են վոչ թե արժեքային ցուցանիշներում, այլ քանակական: Վերցնենք, վորպես, որինակ՝ տնտեսական կյանքի այնպիսի մի ճյուղ, ինչպիսին է կապիտալ շինարարությունը: Կապիտալ շինարարության հաշվառումը կարելի յեւ իրագործել այն գումարների ամփոփմամբ, վոր ծախարիլ են շինարարության վրա, ինչպես սովորաբար և անում են:

Կապիտալ շինարարության վրա գործադրված ծախքերի հաշվառումն ինքնին ամենաին չի բնորոշում շինարարության հաջողության աստիճանը: Այն բանից, թե շինարարության վրա ծախսվել է այնքան փող, վորքան յենթադրվում եր, դեռ չի հե-

տելում, թե շինվել ե այն բոլորը, ինչ պետք է շինվեր: Այստեղ ուրեմն միայն արժեքային հաշվառումն ունենալ դեռ բավարար չե: Անհրաժեշտ և շինարարության ծավալի հաշվառումը: Ապա անհրաժեշտ և հաշվի առնել, ինչ հաջողությամբ և իրագործվել շինարարությունն իր ժամանակին և մի շաբթ այլ մոմենտներ, վորոնք բնորոշում են շինարարական աշխատանքների ընթացքը (շինարարական աշխատանքների մեքենայացման ընթացքը և այլն և այլն):

Կարելի յեւ բերել շատ որինակներ պարզելու, վոր տնտեսական աշխատանքի հաջողությունների զրամական չափանիշն անբավարար է, անհրաժեշտ և փոխարինել այդ չափանիշը կամ լրացնել նատուրալ ցուցանիշներով: Այսպես, ձեռնարկության աշխատանքները զեկավարող տնտեսավարի համար քիչ է իմաստը, վոր այնտեղ աշխատում է այսինչ մեքենան, վորն արժե այսքան հաղար սուբլի: Շատ ամելի կարևոր է իմանալ այդ մեքենայի արտադրողականությունը և այլն:

Ժամանակակից կյանքն առաջին պլանի վրա յեւ դնում հաշվառման նատուրալ ձևը, արժեքային ցուցանիշները փոխարինել քանակական կամ ինչպես ասում են, նատուրալ ցուցանիշներով:

Հաշվապահական հաշվառման մյուս թերությունն այն է, վոր բարդ են նրա այդ ձևերը, վորոնցով պարզվում է նրա վերջնական արդյունքը: Հաշվապահական հաշվեկշիռը, բալանսը, վորը զրուերում և տնտեսական ձեռնարկության գույքային արժեքների և պարտավորությունների դրությունը, իր ձևով բարդ և անմատչելի աղդաբնակության լայն մասսաներին: Այնինչ, մեր ժամանակակից հասարակարգի պայմաններում, յերբ տնտեսական շինարարությանը մասնակցում են բանվորական լայն մասսաները, անհրաժեշտ և այնպիսի հաշվառում, վորը մատչելի լինի լայն մասսաներին կամ, ինչպես ասել ե վ. ի. Լենինը «համաժողովրդական» լինի:

Այսպես կոչված գործնական, սպերատիվ հաշվառումն ունի առանձնահատկությունը, վոր նա իրագործվում է ըստ դեպքերի և սովորաբար չունի վաղորոք սահմանված սիստեմ: Նրա անմիջական խնդիրն է տալ տեղեկություններ այն մասին, ինչ վոր անհրաժեշտ է իմանալ ընթացիկ միջոցառումների համար այս կամ այն տնտեսական յերեսույթների իրագործման ըընապատճենում: Բայց վորովհետև գործառնական զեկավարության այդ պահանջները չեն կարող վաղորոք վորեն սիստեմի վերած-

վել, ապա այդտեղից ել բղխում ե գործառնական հաշվառման մեր նշած անսիստեմ լինելը: Իր հերթին այդ անսիստեմ զրությունը շատ դեպքերում հնարավորություն չի տալիս հետադայում տվյալներն անփոփման յենթարկել ու մշակել: Նամանավանդ, վոր գործառնական հաշվառման նպատակը չե այդ ամփոփումները: Նրա խնդիրն ե տալ տեղեկություններ վորոշ փաստի մասին, վորապես անհրաժեշտության դեպքում ներգործել կամ ուղղություն տալ այդ փաստին: Հաշվառման յերրորդ տեսակը—վիճակագրական հաշվառումը, ինչպես գիտենք, նպատակ ունի տալ ընդհանրացնող յեղրակացություն—ամփոփական հետեւթյան ամբողջ կոլեկտիվի մասին:

Վիճակագրական հաշվառման խիստ սիստեմատիկ լինելը, վոր միանգամայն անհրաժեշտ է հավաքված նյութերի ամփոփման համար, դարձնում ե այդ հաշվառումն առանձնապես պետքական պլանային աշխատանքների համար, իսկ այն հնարավորությունը, վոր այդ հաշվառման տվյալները ողտագործվում են, թե կուզ լինեն վորոշ չափով անձիշտ, իսկ այդ հանգամանքն արագացնում ե նրանց ստացումը շրջաններից, դարձնում ե վիճակագրական հաշվառումն առանձնապես գնահատելի մի միջոց, վորով զեկավարող մարմինները ծանոթանում են իրենց աշխատանքի դրության հետ:

Յերկրի և նրա առանձին մասերի տնտեսական կյանքի զեկավարությունը չի կարող սպասել, վոր ստացվեն իդյալապես ճիշտ տվյալներ, յեթե այդ ճիշտ տվյալները ստացվելու յեն յերկար ժամանակվա ընթացքում: Սոցիալիստական շինարարության հաջողությունը կախված ե այն բանից, թե վորքան իր ժամանակին ազդանշան ե տրվում այդ աշխատանքի այս կամ այն մասում տեղի ունեցած ճեղքածքի մասին:

Յերեք տեսակ հաշվառման առանձնահատկությունների այս թուցիկ համեմատական նկարագրումից յերկում ե, վոր նրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Այդ յերեք տեսակ հաշվառման զուգահեռ ու միաժամանակ գործության սիստեմի թերությունը, բացի ավելորդ զուգահեռից, այն ե, վոր նրանց տվյալները միենույն հարցի վերաբերյալ, թե ժամանակի և թե բովանդակության տեսակետից չեն համապատասխանում միմյանց: Այդ անհորմալ յերկույթը վերացնելու համար անհրաժեշտ ե ստեղծել հաշվառման միասնական սիստեմ, վորը բավարարելու յե սոցիալիստական շինարարության պա-

հանջներին և համապատասխանելու յե սոցիալիստական հաստիակարգի առանձնահատկություններին:

Նոր հաշվառմանը պետք ե լինի վոչ միայն միասնական, այլև սոցիալիստական:

Վորն ե հաշվառման միասնությունը: Բոլոր տեսակ հաշվառումների ձուլումն ի մի այն իմաստով, վոր այդ ձուլումը պարունակի իր մեջ նրանցից յուրաքանչյուրի դրական կողմերը: Նոր հաշվառմանը գործառնական հաշվառումից պետք ե յուրացնի նրա ձգտումը տալ պատասխան այն հարցերին, վոր անհրաժեշտ են գործառնական զեկավարության համար: Հաշվառմական հաշվառումից—նրա ճշտությունը, իսկ վիճակագրականից—նրա արագությունը և հաշվառման տվյալների հարմարությունն ու պետքական լինելն անփոփումների համար:

Վորն ե լինելու հաշվառման սոցիալիստական բնույթը: «Հաշվառում և հսկողություն—ահա գլխավորը, վոր պահանջվում է կարգավորելու և ճիշտ ուղղություն տալու կոմունիզմի առաջին փաղին»—գրել ե իր ժամանակին Վ. Ի. Լենինը *):

Հաշվառումը հսկողության միջոց ե, ընդ վորում այդ հըսկողությունը պետք ելինի լայն, «համաժողովրդական»: Իսկ դրա համար անհրաժեշտ ե, վորպես հաշվառումը կառուցված լինի այնպես, վոր նա լինի պարզ ու մատչելի հասարակական լայն մասսաներին: Այդ ե լինելու սոցիալիստական հաշվառման առաջին առանձնահատկությունը:

Սոցիալիստական նոր հաշվառման յերկրորդ առանձնահատկությունը պետք ե լինի այն, վոր նա ազատագրվելու յե այն հին ձեերից, վորոնք ծագել են մասնագիտական—կապիտալիստական կարգերի պայմաններում: Ընդհակառակը, նա պետք ե խնդիր դնել պատասխանելու այն հարցերին, վորոնց պատասխանների բացակայության դեպքում անհնարին ե սոցիալիստական հաջող շինարարությունը:

Սոցիալիստական հաշվառումը պետք ե լինի այնքան զգացուն, վորպես իր ժամանակին վորսա տնտեսական կյանքի այն մոմենտները, վորոնք կարիք ունեն պարզաբանելու, և դրա հետ միասին այնքան շարժուն, վոր կարողանա տալ գործառնական մարմիններին համապատասխան նյութ: Բանվորական մասսաների ստեղծագործ ակտիվության նոր ձեերը (սոցմրցում, քարվածայնություն), ձեռնարկությունների և նրանց առանձին

*.) В. И. Ленин т. XIV, стр. 389

մասերի (ցեխերի, բրիգագների) տնտհաշվարկի անցնելը—այդ բոլոր միջոցառումների արդյունքը պետք է արտացոլի վիճակաբական թվերում:

Ահա ընդհանուր գծերով այն խնդիրները, վոր առաջ երերում սոցիալիստական միասնական հաշվառման անհրաժեշտություն և վորոնք ուժեղ պահանջում են իրենց արագ լուծումը:

Արծարծված հարցը նոր հաշվառման մասին ավարտելու համար կանգ առնենք մի քանի խոսքերով այն հարցի վրա, թե ինչ գեր և ունենալու վիճակագրական մեթոդը, սոցիալիստական միասնական հաշվառման իրազործումից հետո: Կուտարեն արդյոք այդ ժամանակ վիճակագրական աշխատանքները, չեն լինի արդյոք նրան անպետք: Անկասկած, այն վիճակագրական աշխատանքները, վորոնք նպատակ ունեն փոխարինելու հաշվետու տվյալները, կորցնեն իրենց նշանակությունը, յեթե հաշվառումը լավ գրված լինի:

Բայց ընդհանրացումների խնդիրը, ակնհայտ է, չի վերանա և սոցիալիզմի ժամանակ, կմնան այնպես կոլեկտիվների համեմատական բնութագրման ամփոփական կապերի հայտնաբերման խնդիրները: Հետեւապես, կապահանջի և վիճակագրական մեթոդի կիրառման հնարագործությունը: Այդ վիճակագրական աշխատանքը, վորպես մասնագիտական մարմինների աշխատանք, կվերանա, ինչպես կվերանա նաև հաշվապահական առանձնացած աշխատանքը: «Հաշվապահ» և «վիճակագրի» տերմինները, ինչպես վորոշ պրոֆեսիաների անուն, պետք է նետվեն անցյալի գիրկը:

Սոցիալիստական հասարակակարգի կառուցումը, վոր կատարվում է ներկայիս մեր յերկրում, ստիպում է հաշվետարին իմանալ վիճակագրական աշխատանքների ձևերը, ինչպես և վիճակագրին իմանալ հաշվապահական փաստաթղթերի և բարանացին մեթոդի կազմելը:

ՑՈՒՑԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Այս զլուխը նպատակ ունի պարզել վիճակագրության և վիճակագրական մեթոդի հասկացողությունը: Վիճակագրական մեթոդի առանձնահատկությունները վորոշվում են, առաջին, ուսումնասիրման առարկայով, 2—րդ, առանձին ճանաչողական ձևերով, վորոնցից նա ոգտվում է իր առարկան ուսումնասիրելիս վիճակագրական ուսումնասիրման առարկան կազմում են:

Հավաքականությունները (կոլեկտիվները): Անհրաժեշտ է պարզել, թե ինչ է հավաքականությունը (կոլեկտիվը): Ճանաչողական ձևերը վորոնք բնորոշ են վիճակագրական մեթոդի համար,—ամփոփական հատկանիշներն ու ամփոփական կապերն են: Ծանոթանալով՝ ամփոփական հատկանիշների և անփոփական կապերի եյության հետ, անհրաժեշտ է պարզել, թե կյանքի յերկություններն ուսումնասիրելիս ինչպիսի գեղքերում մենք դիմում ենք վոչ թե առանձին յերեսությունների, այլ նրանց ամբողջ խմբի—հավաքականության ուսումնասիրության:

Պարզելով վիճակագրական աշխատանքի ամփոփական (ընդհանրացնող) բնույթը, հեշտ է վորոշել վիճակագրության առարերությունը հաշվառման այլ տեսակներից, նույնպես և վիճակագրության գերը սոցիալիստական պլանային շինարարության պայմաններում:

Վիճակագրական աշխատանքը, լինելով պլանային շինարարության գործիքը և սոցիալիստական հակողության միջոցներից մեկը, չի կարող լինել չեղոք, քաղաքականությունից դեր, վորպիսի հանգամանքն ապացուցվեց սոցիալիստական շինարարության վնասարարների պրոցեսում:

Հաշվառման առարեր տեսակների զուգահեռ գոյությունը և այն, վոր նրանց աշխատանքները չեն համաձայնեցվում իրար հետ, անհրաժեշտ են դարձնում ստեղծելու միամնական հաշվառում, վորը բավարարելու յե սոցիալիստական շինարարության պահանջները: Մշակելով սոցիալիստական միասնական հաշվառման վերաբերյալ մասը, անհրաժեշտ է պարզել, վոր այդ հաշվառման իրազործումը վոչ միայն չի վոչնչացնում վիճակագրական մեթոդի նշանակությունը, այլ ընդհակառակը, անհրաժեշտ ինդիքտ է զնում, վորպեսզի հաշվառման բոլոր աշխատավորները հիմնվորապես ծանոթանան նրան:

ԱՍՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ 1-ԻՆ ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

- Վորն է վիճակագրական հավաքականությունը (կոլեկտիվը).

- Վոր հատկանիշներն են առարերության հավաքականությունն այլ հավաքական խմբերից.

- Բերեք վիճակագրական հավաքականության մի քանի որինակ.

- Վորն է մեր ճանաչողական զործներության նկարագրական աշխատանքի եյությունը.

5. Վորոնք են խմբական և անհատական հատկանիշները.
6. Վորոնք են սեռի և անփոփական հատկանիշները.
7. Վորոնք են ամփոփական հատկանիշների յերկու տարբեր տեսակները.
8. Վորոնք են ամփոփական հատկանիշների բնորոշ գծերը.
9. Վորն ե մեր ճանաչողական գործնեության բացատրական աշխատանքի եյությունը.
10. Վորոնք են սեռի և ամփոփական կապերը.
11. Ինչ տարբերություն կա տիպիկական և անհատական յերեսութների միջև.
12. Ինչպես են ուսումնասիրվում տիպիկական և անհատական յերեսութները.
13. Անհատական յերեսութների մասին ընդհանուր յեղակացություն համելու համար ինչու անհատական հետազոտումն անբավարար ե.
14. Ինչ բան ե վիճակագրական մեթոդը.
15. Ինչ բան ե վիճակագրությունն իրրե գիտություն, իրե գործնական աշխատանք.
16. Ինչու համար վիճակագրությունն առանձնապես լայն չափերով կիրառվում և տնտեսական յերեսութներն ուսումնասիրելիս.
17. Ինչ տարբերություն կա վիճակագրության և հաշվառման միջև.
18. Ինչու վիճակագրությունն հատուկ նշանակություն և ստանում պլանային շինարարության պայմաններում.
19. Ինչից ե բղխում սոցիալիստական միասնական հաշվառման անհրաժեշտությունը և վորն ե նրա եյությունը:

ԳԼՈՒԽ 2.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ. ԱՎԱՐՏՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐՐԵՐԸ.

Յուրաքանչյուր ավարտված վիճակագրական աշխատանքի վերջնական նպատակն ե, ինչպես պարզեցինք վերևում, վիճակագրական հավաքականություն կազմող մի քանի փաստերի կամ առարկաների նկատմամբ տալ այս կամ այն ամփոփ յեղակացությունը, ընդհանրացած հետևումը: Նայած, թե ինչ խնդիր ենք դրել մեր առաջ մեզ հետաքրքրող հավաքականությունը ուսումնասիրելիս, մեր այդ հետևումն արտահայտվում ե այդ հավաքականության կամ ամփոփական հատկանիշների ձևով (միջին և հարաբերական մեծություններ) կամ այսպես կոչված ամփոփական կապերի պարզաբանման ձևով:

Բայց նախքան այդ հետևումների հանելն, անհրաժեշտ ե վիճակագրական հավաքականություն կազմող այդ առանձին առարկաներից կամ փաստերից յուրաքանչյուրի մասին տեղեկություններ հավաքել: Նախքան պատասխանել այն հարցին, թե տվյալ շրջանի կորոնտեսություններում վորքան եր ցանքի միջին բերքը մեկ հեկտարից, անհրաժեշտ ե նախորոք տեղեկություններ հավաքել յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության բերքի մասին: Վիճակագրական հավաքականություն կազմող այդ առանձին առարկաների տեղեկություն հավաքելը կոչվում է վիճակագրական աշխատանքի առաջին քայլը հանդիսանում ե վիճակագրական հետազոտությունը:

Ապա առանձին յերեսութների մասին հավաքած այդ տեղեկությունները սկսում են հաշվել ի մի գումարել վորի հետևանքով առաջին տեղեկություններն ամփոփելով, տալիս են հանրագումարներ: Վիճակագրական աշխատանքի այդ շրջանը կոչվում ե վիճակագրական հետազոտման նյութերի ամփոփում:

Վոչ մի վիճակագրական աշխատանք չի կարող տեղի ունենալ առանց նյութերի ամփոփման, վորովհետև առանց ամփոփ-

ման չենք ունենա պատկերացում ամբողջ հավաքականության մասին:

Սակայն վիճակագրական աշխատանքը գեռ չի վերջանում նյութերի ամփոփումով: Ամփոփումը մեղ տալիս է միայն հանրագումարներ: Այն ինչ, ինչպես պարզեցինք, վիճակագրական աշխատանքի վերջնական ինդիքըն ե տալ ամփոփական մեծություններ ամփոփական հատկանշներ, ամփոփական կապեր: Ամփոփական մեծությունների հաշվարկելը կատարվում է վիճակագրական աշխատանքի յերրորդ շրջանում, վորը ընդունված է անվանել նյութերի վիճակագրական մշակում:

Յերբ վերջանում է վիճակագրական աշխատանքի այդ վերջին շրջանը այդ ժամանակ կարելի յե համարել վերջացած և վիճակագրի աշխատանքը: Ստացված արդյունքներն անցնում են մասնագետ—տնտեսագետներին, յեթե նյութը վերաբերվում է տնտեսական յերևույթներին, կամ այլ ճյուղի մասնագետի, յեթե վիճակագրական հետազոտածն է յենթարկվել հասարակական կյանքի մի այլ բնագավառ:

Հասկանալի յե, վոր հենց վիճակագրական աշխատանքով կարող ե զբաղվել և տնտեսագետը և այլ մասնագիտության տեր անձը: Այդ ժամանակ հենց նա ել կարող է շարունակել և հետագա աշխատանքը վիճակագրական հետևումների—յեղակացությունների վրա, բայց այդ հետագա աշխատանքը չի լինի արդեն վիճակագրական աշխատանք:

Ուրեմն, յուրաքանչյուր վիճակագրական ավարտված աշխատանք բաղկացած է յերեք մասից—վիճակագրական հետազոտությունից, նյութերի ամփոփումից և մշակումից: Սակայն պետք ե նշել, վոր վիճակագրական աշխատանքը վոչ միշտ կարող է լինել վերջացած: Յերեմն նա կանգ է առնում ամփոփան շրջանում, այսինքն նյութերը հավաքում են և ամփոփում:

Այսպես են մեծ մասամբ թերթերում հրատարակված այսպես կոչված «գործառնական» աշխատանքների ամփոփումները—չողողկոմատի ամփոփումները ցանքի կամպանիայի ընթացքի մասին, ժողովնախորհի ամփոփումները արդյունարերության աշխատանքի մասին և այլն: Խիստ ասած, այդ ամփոփումները վիճակագրական ավարտված աշխատանքներ չեն և կարելի յե վիճակագրական աշխատանք համարել միայն այն չափով, վոր չափով այդ ամփոփումների նյութերը հավաքված են այն հանա-

պարհով, ինչ ճանապարհով հավաքվում են իսկական վիճակագրական աշխատանքի նյութերը, և վորչափով այդ ամփոփումները կազմվում են այնպիսի, վոր նրանք նյութ յեն ծառայում վիճակագրական հետևումներ հանելու համար:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.

Վիճակագրական հետազոտություն, ինչպես ասել ենք, կոչվում է վիճակագրական հավաքականություն կազմող առանձին առարկաների կամ փաստերի մասին տեղեկություններ հավաքելը:

Վիճակագրական հետազոտման հիմնական առանձնահատկությունն այն է, վոր նա տեղեկություններ ե հավաքում բազմաթիվ միասնական առարկաների կամ բազմաթիվ միասնական փաստերի մասին: Դրա համար շատ հաճախ վիճակագրական հետազոտումն անվանում են մասսայական հետազոտում տարրերելու յեղակի հետազոտումից, այսինքն այն հետազոտումից, վորը տեղեկություն է տալիս միայն մեկ առարկայի, մեկ փաստի մասին:

Վիճակագրական հետազոտման մասսայական բնույթը, ընդգրկել վոչ հատ-հատ առարկաներ, այլ նրանց բազմությունը պահանջում է, վոր այդ հետազոտումն առանձին կերպով կազմակերպված լինի: Վիճակագրական հետազոտման նյութերից յերեք չի կարելի ճիշտ հետեւում հանել, յեթե մենք, սկսելով այդ հետազոտումը, վաղորոք չենք մտածել մի շարք հարցերի մասին, թե ինչպես պետք է կատարել այդ հետազոտումը, վորպեսզի ստացվի տեղեկությունների, վոչ թե անկարգ հավաքածու, այլ վորոշ սիստեմով հավաքված տեղեկություններ, վոր կարելի յե ամփոփել և հետևումներ հանել:

Դրա համար վիճակագրական հետազոտում կազմակերպելիս անհրաժեշտ է ուրվագել այն ընդհանուր հարցերը, վորոնք պետք ե լուծվեն ամեն մի վիճակագրական հետազոտման կազմակերպմաբ: Բայց նախքան այդ հարցերի պարզելն և ուրվագելը, հարկավոր է պարզել թե ինչու վիճակագրական հետազոտությունը պետք է լինի մասսայական:

ԻՆՉՈՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ.

Արդեն շոշափել ենք այդ հարցը, յերբ խոսում եյինք վիճակագրական աշխատանքի եյության մասին։ Պարզել ենք, թե վիճակագրական մեթոդով ուսումնասիրում են անհատական առարկաներն ու յերկույթները, խնդիր դնելով նրանց մեջ գտնել այն, ինչ ընդհանուր է։ Որինակ՝ հացահատիկի բերքը մեկ հեկտարից բաղմազան և տարբեր հողամասերում, աշխատում ենք գտնել բերքի միջին մեծությունը, վոր բնորոշ և տվյալ կոլտընտեսության համար. տարբեր և առանձին բանվորների աշխատավարձը ավյալ գործարանում, աշխատում ենք վորոշել մեկ բանվորի միջին աշխատավարձը և այլն։ Թե այն և թե այս դեպքում ստանում ենք ընդհանուր դրությունը, այլ խոսքով հավաքականության ամփոփական հատկանիշը։ Բայց այդ ամփոփական հատկանիշը կարող է ճիշտ ստացվել միայն մասսայական հետազոտման դեպքում։ Յեթե միջին բերքը հանենք միայն 2—3 հողակտորների տվյալներից, կամ միջին աշխատավարձը 2—3 բանվորի աշխատավարձի տվյալներից, կարող ենք չստանալ այն միջին մեծությունը, վորը բնորոշ և տվյալ հողամասերին կամ գործարանին, վորովհետև պատահաբար կարող ենք կամ շատ բարձր կամ շատ ցածր փաստեր վերցրած լինել։

ԱՅՍԹԵՍ ԿՈՉՎԱԾ, ՄԵԾ ԹՎԵՐԻ ՈՐԵՆՔԸ.

Պարզ, առողջ միտքը մեզ թելադրում է, վոր յերբ ուսումնասիրում ենք վորեե հավաքականությունն, մեր յեղբակացությունը հավաքականության մասին այնքան ավելի ճիշտ կլինի, վորքան ավելի առարկա յե ընդդրկում մեր հետազոտությունը։ Յենթադրենք հետազոտել ենք վորեե գործարանի բանվորների աշխատավարձը, վոր ունի 1000 բանվոր և այդ հետազոտության հիման վրա հանել ենք բանվորի միջին աշխատավարձը։ Այդ աշխատանքը կատարել ենք այսպես միջին աշխատավարձը հանել ենք մեկ անգամ 900 բանվորի տվյալները հաշվելով, 2-րդ անգամ 300 բանվորի և 3-րդ անգամ 30 բանվորի։

Այս յերեք միջիններից վորն է ավելի ճիշտ։ Պարզ է այն, վորն ավելի շատ տեղեկություններից ե հանված։

Հենվելով այդ պարզ առողջ մտքի վրա, վիճակագրական աշխատանքները կազմակերպելիս կարող ենք հաստատել մի խիստ

կարևոր դրություն—ուսումնասիրվելիք հավաքականության մասին մեր յեղբակացությունների ճշտությունն ավելանում է այն չափով, վորչափով լրիվ և լինում մեր հետազոտությունը։ Այլ խոսքով, վորքան ավելի առարկա կամ փաստ կընդգրկի մեր հետազոտությունը ավյալ հավաքականությունից, այնքան ավելի վտահելի և արժեքավոր կլինին մեր յեղբակացություններն այդ հավաքականության մասին։ Մեր ձեակերպած այդ ճշմարտությունը կազմում է այսպես կոչված մեծ թվերի որենքը, մանրամասն կանգ առնենք այդ որենքի վրա։

Առաջին հարցը, վոր ծագում է այդ կապակցությամբ, այն եւ, թե վորքան լրիվ պետք է լինի մեր հետազոտությունը, յերբ կարող ենք կանգ առնել և չշատացնել մեր հետազոտությամբ ընդգրկված առարկաների քանակը, վոչ ի վեաս յեղբակացությունների ճշտության։

Թվում է, վոր մենք կարող ենք լիակատար վստահ լինել թե տալիս ենք ուսումնասիրելի հավաքականության ճիշտ բնութագրումը, միայն այն դեպքում, յեթե ընդգրկում ենք նրա բոլոր որյեկտները։ Բայց շատ անգամ անհնարին և լինում հետազոտությունը կատարել սպառիչ լրիվությամբ։ Յեթե որինակ՝ կատարում ենք մարդահամար, վորքան ել ուշադրությամբ տարվե այդ աշխատանքը, միշտ ել հնարավոր են հատհատ անձեր բաց թողնելու դեպքեր։ հետո գրանցումների առանձինառանձին մասին կարող են լինել թերի և չմտնել հաշվի մեջ։ Այդպիսով մեր հետազոտությունը կլինի վոչ լրիվ։ Հարց և ծագում, կարող ե հետազոտությունն այդ չափով վոչ լրիվ լինելն անդրադառնալ մեր յեղբակացությունների ճշտության վրա։

Տրված հարցի լուծումը կախված է այն բանից, թե վորքան մեատեսակ և ուսումնասիրվելիք հավաքականության կազմը։

Յեթե ուսումնասիրում ենք առարկաների այնպիսի մասսա, վորոնք շատ քիչ են տարբերվում միմյանցից, ապա մեր դեպողությունը կարող է ընդգրկել այդ առարկաները վոչ մեծքանակով, չխախտելով յեղբակացության ճշտությունը, բայց

յեթե նրանց տարբերությունը կամ բազմազանությունը շատ մեծ է, ապա քիչ որյեկտներով դատել ամրողջության մասին կլիներ սխալ, և այդ դեպքում գորքան ավելի լրիվ է մեր դիտողությունը, այնքան ավելի ճիշտ է մեր յեղբակացությունը:

Յենթադրենք, մեզ անհրաժեշտ է իմանալ, թե վոր չափով ե գործածում գյուղը վորեն անհրաժեշտ մթերք, որինակ՝ նավթ, ընդունենք, վոր մենք վաղորոք գիտենք, թե առանձին գյուղական ընտանիքներ նավթը գործ են ածում համարյա հաշվասար չափով: Այդ պայմաններում կարիք չկա հարցնել բոլոր տնտեսություններին նրանց գործածած նավթի քանակի մասին. բավական է ցուցակագրել միայն նրանց մի մասը և այդ տվյալների հիման վրա համել մեկ ընտանիքի գործածած նավթի միջն քանակը: Բայց յեթե իմանում ենք, վոր գյուղական ընտանիքներից վոմանք շատ են գործածում նավթ, մյուսները քիչ, վորովհետև վոմանք տնայնազործությամբ են զրադիւմ ու նավթի կարիք շատ ունեն, ապա այստեղ, պարզ է, պետք է հարցնել ավելի մեծ քանակությամբ տնտեսություններ, վոր պեսզի կարելի լինի ընդդեմ բոլոր այն առանձին տարբերությունները նավթի գործածության տեսակետից, վոր կարող են պատահել մեզ հետաքրքրող գյուղում:

Վիճակագրական ավելի, բարդ աշխատանքների ժամանակ կիրառվում են առանձին մեթոդներ, հիմնված մատեմատիկական հաշվարկումների վրա, պատասխանելու այն հարցին, թե արդյոք մեր հետազոտությունը բավարար չափով ե ընդգրկել մեզ հետաքրքրող հաշվարկանության միավորները, վոր կարելի լինի հանել ճիշտ յեղբակացություն: Վիճակագրական հասարակ աշխատանքների ժամանակ նման գեղքում առաջնորդվում են առողջ դատողությամբ և ձեռք բերված փորձառությամբ: Վիճակագրական հետազոտման կազմակերպողի գործառությամբ: Վիճակագրական համար այստեղ այն է, վոր կարողանա ճիշտ պատասխանել այն հարցին, թե իր հետազոտության առարկաների թիվը մինչև վոր սահմանն իմաստ ունի բարձրացնել և ընդհակառակը իր հետաղոտման ընդուրձակումն յերբ և դառնում անողութ:

ԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՔՆՆԱՌԱՏՈՒԹՅՈՒՆԸ.

Նշելով, վոր ճիշտ յեղբակացություններ ստանալու համար անհրաժեշտ է, վորպեսզի մեր հետազոտությունը լինի բավարար չափով լրիվ, կարող ենք անել հակառակ յեղբակացություն:

Վոր մեր հետազոտությունը, յեթե նա բավարար չափով լրիվ է, կարող է հնարավոր դարձնել նկատելու ուսումնասիրելի յերկույթը ների մեջ այնպիսի մի բան, վորն յերբեք մենք չենք նկատի, յերբ սահմանափակվում ենք առանձին յերկույթների հետազոտմամբ: Այդ պարզ ճշմարտությունը կարելի յե պարզել որինակով:

Վերցնենք այսպիսի մի որինակ: Մեծ քաղաքում, վորտեղ փողոցային շարժումը խիստ ուժեղ է, համարյա ամեն որ պատահում են հաճախորդների հետ դժբախտ դեպքեր (վիրավորում, մահ առաջացած տրամվայի, ավտոմորիլի, կառքի շարժումից և այլն): Յեթե հավաքենք տեղեկություններ այդ դժբախտ դեպքերի մասին վորեն տեղական ժամանակամիջոցում տարվա, կես տարվա ընթացքում, և հաշվենք, թե որպա վոր ժամին վորքան դեպք է պատահում, ապա յերեան կդա վորոշ կանոնավորություն, մենք կտեսնենք, վոր փողոցային շարժման զոհերի ամենամեծ քանակը գալիս ե ցերեկվա ժամերին, յերբ շարժումն առանձնապես ուժեղ է: Բայց այդ յեղբակացությունը մենք կարող ենք ստանալ միայն մասսայական հետազոտման հիման վրա, առանձին որերի ավյաները չեն տա վոչ մի կանոնավորություն:

Կարելի յե բերել և ուրիշ որինակներ:

Վիճակագրական հին դասագրքերում շատ հաճախ բերում են հանցագործության դեպքերի որինակներ, վոր կատարվում են համարյա նույն քանակությամբ ամեն տարի, այս կամ այն յերկում, կամ ամռանությունների նույն քանակը կրկնվում է ամեն տարի: Բերում եմ Պետերուրոգի կյանքից այսպիսի փաստ, վոր յուրաքանչյուր մեկ միլիոն նամակին գալիս ե առանց հասցեյի նամակ ըստ առանձին տարիների հետեւյալ քանակով:

1906 թ. — 27 նամակ առանց հասցեյի

1907 թ. — 25 » »

1908 թ. — 27 » »

1909 թ. — 25 » »

1910 թ. — 27 » »

Այդ տեսակի կանոնավորության բոլոր դեպքերը կարելի յե նկատել միմիայն մասսայական հետազոտության միջոցով: Յեթե մենք դիտելինք և հաշվելինք միայն փոստի մեկ արկղ, կարող եր պատահեք վոր նրա մեջ չգտնելինք վոչ մի նամակ առանց հասցեյի բոլոր տարիներում:

Յեթև մենք հետազոտելինք մեռնողների, գողերի, ամուսնացածների թիվը վորեե մեկ ընտանիքում ապա չելինք հանդիպի վոչ մեկ կանոնավորության։ Յեկ զարմանալի չե, վոր այս կամ այն կանոնավորությունը կարելի յե նկատել վորեե մասսայական միջավայրում, կամ վորեե հավաքականության մեջ միմիշայն մասսայական հետազոտման ոգնությամբ։ Սակայն յերբ վիճակագրական աշխատանքների ծագման շրջանում թվական տվյալների այդ կանոնավորությունը, վորոնք արտացոլում էին հասարակական կյանքի զանազան փաստերն առաջին անգամ հայտնաբերեցին վիճակագիրները, այդ կանոնավորությունը նրանց վրա թողեց շամեցուցիչ տպավորություն։

Առաջին վիճակագիրներից մեկը, գերմանացի պատոր Զյուսսմիլիսը, վորի աշխատանքները վերաբերում են 18-րդ դարու կիսին, տհոնելով, իր տվյալներում ծննդյան, մահվան, ամուսնության միատեսակ քանակը, վոր կրկնվում են նույնությամբ համարյա ամեն տարի, յեկել ե այն յեղրակացության, թե դա, «աստվածային նախախնամության» կարգն ե, վորով նա հոգում ե, վորպեսզի՝ ազգաբնակությունը վոչ շատ աճի և վոչ ել վերջանա:

Ավելի ուշ գերմանացի զիտանական Աղոլֆ Վագները պատկերավոր կերպով նկարագրել ե թվերի այդ կանոնավոր կրկնողությունը, վորոնք արտացոլում են մարդկային գործողությունները, հեքյաթական թագավորության ձեռվ, վորի մեջ վաղորոք «նախավորոշված ե», թե վորքան անգամ պետք ե կատարվի այս կամ այն արարքը, իսկ մարդիկ, վորոնք կատարում են ինչ վոր մեկի այդ կողմանակի հրամանը, յերևակայում են, վոր գործում են լիովին ազատ։ Յերրորդ զիտանական Կետլեն հաստատում եր, թե կա իր տեսակի մի տուրք, վորը մարդկությունը վճարում ե ավելի մեծ պարտաճանաչությամբ, քան այն տուրքերը, վոր նա տալիս ե պետությանը. դա բանտի, աքսորի և կախաղանի տուրքն ե, վոր տալիս ե մարդկությունն ամեն տարի գրեթե նույն քանակությամբ գոհերով։

Այդպես ե ծագել վիճակագրական թվերի այսպես կոչված կայունության տեսությունը, թվեր, վորոնք արտացոլում են հասարակական կյանքի յերեւյթները և հենց գրանով այդ յերեւյթների կայունությունը։ Դժվար չե համոզել վոր այդ տեսությունը և 2-րդ՝ հետազիմական,

ոեակցիոն բնույթ ունի և վորպես այդպիսին ամենակարուկ կերպով պետք ե մերժմի:

Յերբ խոսում ենք կայունության տեսության խախուտ լինելու մասին, ամենից առաջ անհրաժեշտ ե նշել, վոր այդ կայունության ժաման ինքնին վիճելի յե: Ճիշտ ե, յեթե վերցնենք մինչպատերազմյան վիճակագրության տվյալները, կհանդիպենք այնպիսի յերեւյթների, վոր յուրաքանչյուր հազար շնչին ամեն տարի գալիս ե միջին թվով մեռնող յերեխաների համարյա նույն քանակը։ Սակայն յեթե վերցնենք թվական տվյալներ շատ յերկար ժամանակամիջոցի ընթացքում, ապա կնկատենք, վոր այդ թվերն աստիճանաբար փոփոխվում են: Հիրագի, վորոնք են յերեխաների մահացության պատճառները, կա մի շարք պատճառներ՝ որպանիզմի թուլությունը փոքրահասակ տարիքում, սոցիալական, կուլտ. կենցաղային պայմանները և այլն և այն: Բայց կարող ենք առել, վոր այդ պատճառները կայուն են և չեն փոփոխվում. տարիների ընթացքում: Ի հարկե վոչ: Հետեապիս յեթե պատճառները կայուն չեն, վորոնք առաջ են բերում ավյալ յերեւյթը, չի կարող կայուն լինել և այդ յերեվույթը: Յեթե փորձենք համեմատել յերեխաների մահացության դեպքերը մեջ և նախապատերազմյան թուլատանում, կստանայինք հսկայտեական տարրերություն։ Յերեխաների մահացության դեպքերը ԽՍՀՄ-ի մեջ իւստ կրծատվել են: Յեկ այդ առաջ ե յեկել նրանից, վոր փոփոխվել են այն պայմանները, վորոնք պատճառ են դառնում յերեխաների մահացության, այն ե՝ զգալի չափով բարեկամել ե բանվորական զասակարգի նյութական և կուլտ. կենցաղային պայմանները, լայնացել և մանկական տների, մառլիների, բժշկական ձեռնարկների ցանցը և վերջապես ընդարձակվել են հիվանդությունները կանխելու միջոցառումները:

Այդ սրինակից պարզ ե, վոր այն հարցի պատասխանը, թե զոյություն ունի արդյոք վիճակագրական թվերի կայունություն ժամանակի ընթացքում, կախված ե այն բանից, ընդունում ենք արդյոք այն պատճառների անխախտ լինելը վորոնցից կախում ունեն այն յերեւյթները, վորոնք արտացոլվում են այդ թվերում։ Մեզ համար, վոր վոչ միայն վկա յենք, այլև մասնակից այն մեծ հեղափոխության, վորը վոչ միայն ընդորկել ե սոցիալական փոխհարաբերությունների ամենախորը ծալքերն ու վորոտները, այլ և յենթարկում ե իրեն բնության

այնպիսի յերեսույթներ, ինչպիսին են խոնավության քաշխումը ցանքերի վրա, բուսականության տեղափոխումը մեկ շրջանից մյուսը և այն, մեզ համար այդ հարցի պատասխանը կինի միայն բացասական «Ամեն ինչ փոփոխվում է, ամեն ինչ հոսում»; ամեն ինչ շարժվում է գոյության գեղի նոր ավելի բարդ ձևը,—դա և դիմիկական մատերիալիզմի փիլիսոփայության, հիմնական դրությունը, փիլիսոփայության, վոր պատկանում է միայն հեղափոխական պրոլետարիատին և նրանց, վորոնք մասնակից են այն ստեղծագործ աշխատանքին, վորն իրագործվում է նրանց ձեռքով:

Պարզ ե, յեթե ընդունում ենք յերեսույթների կայունյությունը (մշտականությունը, անփոփոխ լինելը), հենց զբանով բացասում ենք նրանց փոփոխության հնարավորությունը, բացասում ենք հեղափոխական ներգործման հնարավորությունը: Այդ ե կայունության տեսության հետադիմական լինելը: Դրանով ե բացատրվում ե այն, վոր կայունության այդ տեսությունը կազմել ե սոցիալիստական շինարարության վնասարարների տեսության հիմքը, վորոնք դատապարտվել են հեղափոխական պրոլետարիատի դատարանով:

Հենվելով այն բանի վրա, ինչ տեղի յե ունեցել անցյալ ներում, այդ տեսությունները գալիս ելին այն յեղակացության, թե այդպիս ել կինի հետագայում: Նշելով, որինակ՝ վոր բարձր բերքին վորոշ տարիներից հետո հաջորդում ե անընթերություն, նրանք աշխատում ելին այդ տվյալների հիման վրա գուշակել, թե 1930 թվին լինելու յե անընթերություն, ցած բերք. «մոռանում ելին» միաժամանակ գյուղատնտեսության վերակառուցման մեջ կատարված այն հսկայական տեղաշարժերը, ինչպես են սովորողների և կոլխոզների հսկայական աճումը և այն հսկայական տեղաշարժերը, վոր տեղի յեն ունեցել և կատարվում են մեր առաջ գյուղատնտեսության տեխնիկայի մեջ:

Վնասարարների տեսության, և հետեապես կայունության ամենալավ հերքումը հանդիսանում ե մեր տնտեսության այն հսկայական աճումը, վոր տեղի յե ունեցել վերջին տարիներում և վորը ընդունում են ԽՍՀՄ-ի նույնիսկ թշնամիները:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՐՆԵՐԸ.

Ժամանակակից պայմաններում, յերբ վիճակագրական տվյալները սոցիալիզմի շինարարության խիստ կարեոր միջոցառումների հիմքն են կազմում, այդ տվյալների ճշտության հար-

ցը հսկայական նշանակություն ունի. այդ կապակցությամբ առանձնապես կարևոր նշանակություն և ստանում վիճակագրական տեղեկությունների աղբյուրների և այդ տեղեկությունները հավաքելու մեթոդների հարցը:

Վիճակագրական աշխատանք ձեռնարկող մարմնի խնդիրն է յուրաքանչյուր առանձին գեպօրում վճռել այն հարցը, թե ինչ սպառություններից կարող ե և պետք ե հավաքել անհրաժեշտ տեղեկությունները. ուղարկել արդյոք աշխատակիցներին այնտեղ, վորտեղ տեղի յե ունենում ուսումնասիրության յենթակա յերկույթը, վորպեսզի նրանք անմիջապես հետազոտեն եյությունը, հարցնել արդյոք մարդկանց, վորոնք մոտիկ են կանգնած յերեսույթին, կամ թե քաղել անհրաժեշտ տեղեկություններ՝ այս կամ այն փաստաթղթերից, գրանցումներից: Հիշյալ աղբյուրներից վերջինը փաստաթղթերը, վորոնք գուցե կազմված են վոչ վիճակագրական նպատակով, առանձնապես հուսալի աղբյուր են նման տեղեկությունների համար, դրանով ե բացատրվում այն, վոր ներկայիս վիճակագրությունը շատ հաճախ զիմում ե այդ աղբյուրին:

Ինքենք մի քանի որինակ, յերբ վիճակագրական նպատակների համար ուղարկործում են այնպիսի գրանցումներ, կատարված են այլ նպատակի համար: Յենթագրենք, անհրաժեշտ և հավաքել տեղեկություններ վորենք ձեռնարկության բանվորների աշխատավարձի մասին այս կամ այն ամսվա համար, վորպեսզի հանենք մեկ բանվորի միջին աշխատավարձը: Այդ տեղեկություններն ի հարկե, կարող ենք ստանալ, հարցնելով բանվորներին իրենց աշխատավարձի մասին: Բայց ավելի հեշտ կարող ենք աշխատավարձի տեղեկագրից—ցուցակից: Աշխատավարձի տեղեկագրը մի փաստաթղթե, վորը յերբեք ել չի կազմված վիճակագրական նպատակով: Այդ փաստաթղթը ծառայում ե վորպես ապացույց, վոր բանվորին վճարված և այս կամ այն գումարը: Այդ բանը սակայն վոչ միայն չի խանգարում վիճակագրին ուղարկործել այդ գրանցումները—միջին աշխատավարձը հանելու համար, այլև ընդհակառակը, ողնում ե տվյալ հարցի վերաբերյալ հեշտ տեղեկություններ ունենալ: Ճիշտ նույնպես, յեթե կը ակազիրը ցանկանում է տեղեկություն ունենալ միջին ցանքի մասին կողանտեսության մեջ, կամ վորքան և ծախսում մեքենատարակառային կայանը վառելիք ու այդ նպատակով

վիճակաղիքն ողտագործում ե այդ անտեսությունների հաշվապահական գրանցումները, զրանով վոչ միայն հեշտացնում ե իր աշխատանքը, այլ և ապահովում ե իր աշխատանքի արդյունքների ճշությունը:

Կան սակայն մի քանի պայմաններ, վորոնց ներկայությունն անհրաժեշտ ե, զորպեսզի այդ փաստաթղթային զրանցումները կարողանան ողտագործվել վիճակագրական մշակման համար: Այդ պայմաններն այն են, վոր այդ զրանցումները պետք է համարվեն վիճակագրական նոպատակով ողտագործելու համար և պատրաստ լինեն այն ժամկետին, յերբ վիճակագիքը դրանց կարիքն ե զգում:

Վերևում արդեն ասել ենք, վոր միասնական սոցիալիստական հաշվառումը, վորի իրագործումն որվա հրատակ թնդիր եք պետք և հիմնվի միասնական փաստաթղթերի վրա, վորը միատեսակ չափով պետքական ե ինչպես գործնական աշխատանքի համար նույնպես և վիճակագրական մշակման: Մենք նույնպես նշել ենք, վոր սոցիալիստական հաշվառման խնդիրներից մեկն ե աշխատանքի արագությունը, վորն ապահովում ե այդ հաշվառման վրա հիմնը՝ մած միջոցառումների իրագործումը: Այդ բոլորը հիմք ե տալիս հաստատելու, վոր փաստաթղթային տվյալների ողտագործումը, վորպես վիճակագրական տեղեկությունների աղբյուր, տպագայում առանձնապես լայն ծավալ կտանա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Գործնական վիճակագրությունը գիտե տեղեկություններ հաշվաքելու մի քանի յեղանակներ: Յերբեմն վիճակագրական հետագություն կատարում ե ինքը վիճակագրական մարմինը կամ նրա ժամանակավոր գործակալները (ցուցակագրողները): Վիճակագրական հետազոտման իրագործման այդ ձեզ կոչվում ե (արշավային եքսպերտիզմ), վորովհետեւ հետազոտողները սովորաբար դնում են խմբով (արշավ են կազմում) այնտեղ, վորտեղ յերեկույթն են հետազոտելու: Այդ ձեռն անվանում են նաև բերանացի հարցի:

Վիճակագրական հետազոտման մյուս ձեռն այն ե, վոր այդ հետաղոտությունը կատարում են վիճակագրական մարմին համար բոլորովին կողմանակի մարդիկ: Վիճակագրական տեղեկություններ հավաքելու այդ յեղանակի առանձնահատկությունն այն ե,

վոր տեղեկություններ հավաքող անձինք չեն մասնակցում հավաքված նյութի մշակմանը և, վոր առանձնապես կարեոր ե, տեղեկությունների զրանցումն այստեղ կատարվում ե վիճակագրական մարմնի մշտական տեխնիկական հսկողությունից և զեկավարությունից զուրս, հակառակ արշավային ձեր, յերբ հետազոտական աշխատանքը գտնվում է վիճակագրական մարմնի մշտական հսկողության տակ:

Վիճակագրական հետազոտության վերջին ձեռն ունի իր միքանի տեսակը: Նկատի ունենալով այն, թե հետազոտողն ինչ հարաբերություն ունի գեպի իր հետազոտման առարկան, տարբերում են 4 ձևով, — 1) ինքնահարցում, 2) թղթակցային ձև, 3) հաշվետվության ձև և 4) անկետային ձև:

Ինքնահարցման կիրառման տվյալական ձեռն այն է, ուստի իր անունը, վիճակագրական հետազոտության այն ձեռն է, յերբ հետազոտողը լցնելով վիճակագրական այս կամ այն հարցաթերթը, տեղեկություն է տալիս իր մասին կամ այն յերեկույթների մասին, վորոնք անմիջապես կապված են նրա հետ:

Ինքնահարցման կիրառման տվյալական ձեռն ազգաբնակության ցուցակագրումն ե —մարդաբանաբար: Հայտնի յետ, վոր մարդաբանաբարի ժամանակ ազգաբնակությանը բաժանում են հարցաթերթեր և յուրաքանչյուր քաղաքացի պետք և լցնե այդ թերթը, այսինքն պատասխանե այն հարցերին, վորոնք վերաբերում են իրեն: Վիճակագրական մարմնի աշխատակցի՝ վիճակագրի գերն այդուղ այն ե, վոր նատարածում է հարցաթերթերն ազգաբնակության մեջ, բացարձում է լցնելու ձեր, հետ և ստանում լցրած հարցաթերթը և ստուգում է կատարված զրանցումները: Ինքնահարցման ժամանակ վիճակագրի կատարելիք այդ պարտականություններից յերեկում ե, վոր այդ ձեռն ուժեղ առանձնահարցումն չի տալիս, վրա համար ել այդ ձեր համեմատաբար քիչ և զործադրվում:

Սակայն կան հետազոտման վարող ընապավառներ, վորտեղ ինքնահարցումն ամենացանկալի ձեռն ե, նույնիսկ փաստորեն միակը: Այդպիսի նշանակություն է ստանում ինքնահարցումն այն գեպերում, յերբ հետազոտման առարկան յերկար ե տեղում, հիշել կատարված իրողությունները դժվար ե լինում: Որինակ՝ անտեսության ստացած յեկամուտներն ու կատարած ծախքերը վորոց ժամանակաշրջանում, ընտանիքի զործածած սննդային մթերքների քանակը և այն: Նման գեպերում կի-

բառում են տվյալ յերեսույթի ընթացիկ գրանցումների կարդագրանցումը կատարում ե անտեսության անդամներից մեկը, իսկ վիճակագրական մարմնի աշխատակիցը, պարբերաբար այցելելով տվյալ տնտեսությունը, ստուգում ե գրանցումները և տալիս տեխնիկական ցուցմունքներ, թե ինչպես լցնել հարցաթերթը։ Այդ ձեռն ե կիրառում Պետականը գյուղատնտեսական վիճակագրական աշխատանքները կատարելիս։

Թղթակցություն ձեռն է յությունն այն ե, զոր կողմանի մարդիկ հրավիրվում են վիճակագրական տեղեկություններ տարմի շարք յերեսույթների մասին, վորոնք նրա սեփինական տնտեսությանը չեն վերաբերում։ Թղթակցական ձեռն հիմնական տարբերությունն ինքնահարցումից այն ե, զոր ինքնահարցումի ժամանակ հարցերին պատասխանողն անմիջապես զործ և ունենում վիճակագրական մարմնի աշխատակցի հետ նրանից և ստանում հարցաթերթը և, զոր կարեորն ե, նրանից ե լսում հրահանգ ու բացատրություն հարցաթերթի հարցերի վերաբերյալ։ Այն ինչ թղթակիցն իր աշխատանքը կատարելիս զործում ե ինքնուրույն։ Սովորաբար փոստով և ստանում հարցաթերթը, փոստով վերադարձնում և չի լինում վիճակագրական մարմնի հետ անմիջական հարաբերության մեջ իր աշխատանքի ընթացքում։

Թղթակցի պարտականությունները կարող են կատարել կամ կամավոր կերպով կամ այդ պարտականությունները դըրվում են վորոշ անձնավորությունների վրա ընտրական կարգով։ Կամավոր թղթակիցների աշխատանքի ոգտագործումը յերեմն լայն չափերով կիրառվում եր գյուղատնտեսական ընթացիկ վիճակագրության մեջ։ Կամավոր թղթակիցների աշխատանքից ոգտվում են նաև տնտեսական կյանքի այլ ճյուղերում։

Վիճակագրական մարմինները կամավոր թղթակիցների ոգտությանը զիմում են այն զետքերում, յերբ չեն ունենում բարքարար չափով տարածված վիճակագրական ցանց և յերբ այս կամ այն պատճառով անհնարին և լինում կիրառել հետազոտման արշավային ձեր։ Մեր պետական վիճակագրությունը կամավոր թղթակիցների ոգնությունը լայն չափերով օգտագործում եր զեր մոտ ժամանակներս հատկապես գյուղատնտեսական կյանքի յերեսույթներն ուսումնասիրելիս։

Բայց մի շարք նկատառություն ստիպեցին մեր վիճակագրական մարմիններին—Պետականի տեղական վիճակագրական մարմիններին—կամավոր թղթակիցների սիստեմից անցնել ընտրութիւնը թղթակիցների սիստեմին։

Սոցիալիստական շինարարարության շրջանում, յերբ վիճակագրությունը, ինչպես նշել ենք վերևում ստանձնում ե քաղաքական պատասխանատու դեր, պետությունը չի կարող վատահել վիճակագրական տեղեկությունների հաղորդման պարտականություններն ամեն մի ցանկացողի։ Թղթակցական ցանցի կազմակերպման այդ տեսակ սիստեմը կարող ե հասցնել այն բանի, վոր խորհրդային աշխատանքի այդ պատասխանատու մասը կարող ե ընկնել պրոլետարիատի գասակարգային թշնամիների ձեռքը գրանովլ սպառնալիքի տակ և դրվում այն տնտեսական ձեռնարկությունների հաջողությունը, վորոնք հենվում են վիճակագրական այդ տեղեկությունների վրա։ Այդ նկատառություններով կամագոր թղթակիցների սիստեմը վերածվեց ընտրութիւնը թակեցների սիստեմի, վորոնք կոչվում են վիճակագրություններ։

ԽՀԾՄ-ի սահմաններում վիճակագրությունների սիստեմը վարություն և հետեւյալ կանոնագրությամբ, վոր հասանակ և համամիութենական ժողովրդական կոմիսարների Խորհուրդը, 1930 թ. մարտի 13-ին։

1) Գյուղատնտեսության գրության հաշվառման աշխատանքներն անմիջապես տանելու և գյուղատնտեսության հետ կապված վիճակագրական տեղեկություններ հավաքելու համար գյուղխորհուրդներին կից վործում են վիճակագրական լիազորներ։

2) Վիճակագրուներին ընտրում են գյուղխորհուրդները, այդ պաշտոնի համար թեկնածու տալիս են գյուղի չքավորական խմբակները, արհմիութենական և հասարակական այլ կազմակերպությունները։

Վիճակագրուներին ընտրելիս ուշադրության և առնվում այն, վոր այդ աշխատանքի համար ընտրվեն ամենալավ, վիճակագրական աշխատանքի փորձառություն ունեցող թղթակիցներ՝ գյուղվրդական և միջակ խավերից։

3) Ամեն մի գյուղխորհուրդի համար, իբրև կանոն, ընտրվում ե մեկ վիճակագրոր։ Սակայն այն գյուղխորհուրդներում, վորոնք ընդունելում են մի քանի խոշոր գյուղեր, նույնապես և այն գյուղի խորհուրդներում, վորտեղ տեղային պայմանները պահանջում են, ընտրվում են մի քանի վիճակագրություն, դրանց թիվն վրացում ե շրջանային Գործադիր կոմիտեն։

Մի քանի վիճակագրոր ընտրելու գեպքում նրանցից մեկին գյուղխորհուրդը նշանակում է ավագ, վորի վրա պարտականություն և զնում համաձայնեցնել բոլոր վիճակագրուների աշխատանքները տվյալ գյուղուրդադում։

բառում են տվյալ յերևույթի ընթացիկ գրանցումների կարգ՝ գրանցումը կատարում և տնտեսության անդամներից մեկը, իսկ վիճակադրական մարմնի աշխատակիցը, պարբերաբար այցելու տվյալ տնտեսությունը, ստուգում և գրանցումները և տակա մատենինիկական ցուցմունքներ, թե ինչպես լցնել հարցաթիրթը։ Այդ ձևն է հիբրառում Պետպլանը զյուղատնտեսական վիճակադրական աշխատանքները կատարելիս։

Թղթակցության ձևի եյությունն այն է, վոր կողմանի մարդիկ հրավիրվում են վիճակադրական տեղեկություններ տալ մի շաբաթ յերեսությունների մասին, վորոնք նրա սեփիական տնտեսությանը չեն վերաբերում։ Թղթակցական ձևի հիմնական տարրերությունն ինքնահարցումից այն ե, վոր ինքնահարցումի ժամանակ հարցերին պատասխանողն անմիջապես գործ և ունենում վիճակադրական մարմնի աշխատակցի հետ նրանից և ստուգում հարցաթերթը և, վոր կարևորն ե, նրանից և լուսմ հրահանգ ու բացատրություն հարցաթերթի հարցերի վերաբերյալ։ Այն ինչ թղթակիցն իր աշխատանքը կատարելիս գործում ե ինքնուրույն։ Սովորաբար փոստով և ստանում հարցաթերթը, փոստով վերադարձնում և չի լինում վիճակադրական մարմնի հետ անմիջական հարաբերության մեջ իր աշխատանքի ընթացքում։

Թղթակցի պարտականությունները կարող են կատարել կամ կամավոր կերպով կամ այդ պարտականությունները գրքով ուրում են վորոշ անձնավորությունների վրա ընտարական կարգով։ Կամավոր թղթակիցների աշխատանքի ոգտագործումը յերեմն լայն չափերով կիրառվում եր զյուղատնտեսական ընթացիկ վիճակադրության մեջ։ Կամավոր թղթակիցների աշխատանքից ոգտվում են նաև տնտեսական կյանքի այլ ճյուղերում։

Վիճակադրական մարմինները կամավոր թղթակիցների ռողությանը դիմում են այն գեղքերում, յերբ չեն ունենում բարակարար չափով տարածված վիճակադրական ցանց և յերբ այս կամ այն աշտաճառով անհնարին և լինում կիրառել հետազոտման արշավային ձեր։ Մեր պետական վիճակադրությունը, կամավոր թղթակիցների ողնությունը լայն չափերով ոգտագործում եր դեռ մոտ ժամանակներս հատկապես զյուղատնտեսական կյանքի յերեսություններն ուսումնասիրելիս։

Բայց մի շաբաթ նկատառումներ ստիպեցին մեր վիճակադրական մարմիններին—Պետպլանի տեղական վիճակադրական մարմիններին—կամավոր թղթակիցների սիստեմից անցնել ընտրությունների սիստեմին։

Սոցիալիստական շինարարության շրջանում, յերբ վիճակադրությունը, ինչպես նշել ենք վերեսում ստանձնում և քաղաքական պատասխանառությունը պեղեկությունների հաղորդման պարտականություններն ամեն մի ցանկացողի։ Թղթակցական ցանցի կաղմակերպման այդ տեսակ սիստեմը կարող է հասցնել այն բանի, վոր խորհրդային աշխատանքի այդ պատասխանառու մասը կարող ե ընկնել պրոլետարիատի գասակարգային թշնամինների ձեռքը. զրանով սպառնալիքի տակ և դրվամ այն տնտեսական ձեռնարկումների հաջողությունը, վորոնք հենվում են վիճակադրական այդ տեղեկությունների վրա։ Այդ նկատառումներով կամավոր թղթակիցների սիստեմը վերածվեց ընտրովի թըղթակիցների սիստեմի, վորոնք կոչվում են վիճակադրություն։

ԽՍՀՄ-ի սահմաններում վիճակադրությունը սիստեմը վորոշվում և հետևյալ կանոնազրությամբ, վոր հաստատել և Համամիութենական ֆողովրդական Կոմիսարների Խորհուրդը, 1930 թ. մարտի 13-ին։

Թվականը	Ընդամենը հանված ե	Ա. Յ. Թ. Թ. Վ. Ռ. Մ.			
		Բազմացում	Գրողման	Նիրայում	Կարան- ական ան- ժայան
1922/23 թ.	5.167.455	3.485.065	1.503.360	133.078	45.952
1923/24 թ.	5.935.866	4.124.822	1.631.131	125.548	54.376
1924/25 թ.	6.960.135	4.662.578	2.026.719	194.087	76.751
1925/26 թ.	8.214.507	5.513.623	2.411.935	246.537	72.442
1926/27 թ.	10.161.970	6.809.710	3.021.876	248.632	81.842
1927/28 թ.	11.505.588	7.753.805	3.576.281	249.775	105.727
1928/29 թ.	13.547.559	8.683.377	4.440.211	268.480	155.490
1929/30 թ.	14.089.298	10.204.723	6.075.571	340.870	468.134

ԽՄԲԱԿԱՑԻՆ ԱՂՅՈՒՍՑԱԿՆԵՐ.

Խմբական աղյուսակները պատկանում են բարդ աղյուսակների տիպին, նրանց առանձնահատկությունն այն է, վորուսումնասիրելիք հավաքականությունն ըստ այս կամ այն հատկանիշի բաժանվում են մասերի: Աղյուսայակի այդ տեսակը հաճախ կիրառվում են վիճակագրական նյութերի վոչ թե ամփոփման, այլ հետագա մշակման շրջանում: Խմբական աղյուսայակի որինակ են հետևյալ № 5 աղյուսայակը:

Ամբողջ հավաքականությունը (Սոսկայի ազգաբնակությունը 1923 թվին) այդ աղյուսայակում բաժանված են խմբերի՝ ըստ տարիքի քանակի: Այս աղյուսայակը տարբերվում է նախկին աղյուսակներից նրանով, վոր այստեղ հավաքականությունը բաժանվում է խմբերի՝ նրա ներքին կազմը վերլուծելու նպարաժանությունը և ամբողջ աղյուսակությունը բաժանել են տարիքից, Սոսկայի ամբողջ ազգաբնակությունը բաժանել են խմբերի ըստ տարիքի, այսինքն՝ այնպիսի խմբերի, վորոնք ըստ մեր յենթադրության պիտիք են զանազանվեն միմյանցից՝ մահացության չափով և յուրաքանչյուր խմբի համար հաշվել են մահացության ցուցանիշը: Այլ խոռոչով, յենելով վորոշ յենթադրությունից, խմբակային աղյուսայակը կազմելիս մենք ստուգում ենք այդ յենթադրության ճշտությունը և համոզվելով գնա մեջ հասաւատում ենք մահվան և տարիքի միջև յեղած կապի փաստը: Յուրաքանչյուր խմբական աղյուսայակի հիմնական խնդիրն են պարզել յերևույթների միջև յեղած կապը: Դրա համար ել կարող մարդկան պարզել նրանույթների միջև յեղած կապը լինական ինքարել ասել, վոր խմբական աղյուսայակի խնդիրն են համապարել յերևույթը՝ պարզել նրա աչքի ընկնող հատկանիշները:

Աղյուսակության մահացությունը Սոսկայում 1923 թվին.

Աղյուսայակ № 5

ՀԱՄԱԿ	Բնակչություն ըստ 1923 թ. մարդահամարի	1923 թվին միանողների թիվը	Մեմանակի թիվը ամեն մի 1000 հազար (տվյալ հասակի)
0—4 տարեկան	119.200	10.018	84,0
5—9	93.370	572	5,8
10—14	132.298	408	3,1
15—19	146.966	530	3,6
20—29	426.140	1.924	4,5
30—39	268.495	1.808	6,7
40—49	176.886	2.046	11,6
50—59	105.338	1.981	18,3
60—	66.682	2.950	44,3
	2.300	400	—
Ընդամենը . . .	1.542.874	22.677	14,7

Լուսաբանելու համար, թե խմբական աղյուսայակը վորքան ձանաչողական լավ միջոց ե տնտեսական յերեսույթներն ուսումնասիրելու համար, բերենք խմբական բազմաթիվ այն աղյուսակներից մեկը, վորոնք կան Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Խուսաստանում» գրվածքում:

Այդ աղյուսակում բերված տվյալները բնորոշում են վարձու աշխատանքի կիրառումը ցուղացիական անտեսություններում Պերմի նախանդի Կրասնո—Ռուֆիմ գավառում, անցյալ դարի 90-ական թվականներին (աղյուս. № 6): Փորձենք վերլուծել այդ աղյուսայակը. ամենից առաջ վոր այդ աղյուսայակն ըստ տիպի խմբական ե: Նրա յենթակայում հետազոտվող գյուղացիական անտեսությունների ամբողջ հավաքականությունը բաժանված է տնաեսական զանազան խմբերի, սկսած այն տնտեսություններից, վորոնք բոլորովին հող չեն մշակում, հասնում ե մինչև այն տնտեսությունները, վորոնք մշակում են մեծ քանակությամբ հող, անցնելով 50—դեսյատինի սահմանից: Դալով աղյուսայակի բովանդակությունը, ենց առաջին սյունյակում, վոնտեղ բերված ե, թե վորքան տղամարդ աշխատավոր ույժ ե գալիս միջին թվով մեկ տնտեսությունը, նկատում ենք հետաքրքիր որինաչափություն—վորքան շատանում և մշակվող հողի տարածությունը, այնքան ավելանում ե բանվոր ձեռքերի քանակը: Անա որինակաչափություն, վորը չի կարող չընետաքրքել ամեն մի հետազոտողի: Սակայն այդ չե տվյալ աղյուսայակի հետաքրքը բության կենտրոնը:

Հետեւյալ չորս սյունյակները, վորոնք ցույց են տալիս վարձու բանվոր ունեցող տնտեսությունների քանակը, պարզում են, թե ինչպես վարձակալության դեպքերն աճում են համապատասխան մշակվող հողի մեծության:

Տնտեսությունների խմբավորումը.	Բանվոր վարձող տնտեսությունների թիվը.					Բանվոր վարձող տնտեսությունները 0/0-ով.				
	Մեղմանակին հողը	Խոտհանման հողը	Հացահատիքի հողը	Կարմիր հողը	Մեղմանակին հողը	Խոտհանման հողը	Հացահատիքի հողը	Կարմիր հողը	Մեղմանակին հողը	Խոտհանման հողը
Զեն մշակում	0,6	4	16	—	—	1,15	0,6	—	—	—
մ. մ. մինչև 5 դեմ.	1,0	51	364	340	655	0, 7	5,1	4,7	9,2	
“ “ 5-10 ”	1,2	268	910	1385	1414	4, 2	14,3	20,1	22,8	
“ “ 10-20 ”	1,5	940	1440	2325	1371	17, 7	27,2	43,9	25,9	
“ “ 20-50 ”	1,7	1107	1403	1542	746	50, 0	47,9	69,6	33,7	
“ “ 50-ից ավելի ”	2,0	143	111	150	77	83, 1	64,5	87,2	44,7	
Ընդամենը	1,2	2513	3884	5742	4203	10, 6	16,4	24,3	18,8	

Ճիշտ ե, ամենաբարձր խմբում բանվոր վարձող անտեսությունների թեկը խիստ ցածրանում ե, բայց այդ բացատրվում է նրանով, վոր անտեսությունների թիվն այդ խմբում շատ չեն չին ե (այդ գրքում բերված մյուս աղյուսակի տվյալներով այդ անտեսությունները կազմում են միայն 0, 70%), Առանձնապես հետաքրքիր են աղյուսակի վերջին 4—սունյակները, վարտեղ յուրաքանչյուր խմբի համար ցույց ե տրված բանվոր վարձող տնտեսությունների տոկոսը: Այդ տվյալներից յերեսում ե, վոր բանվորների վարձակալությունը, վորը հազվագյուտ յերեսում է առաջին խմբի տնտեսությունների համար, ամենաբարձր չուփերի յե համառում վերջին խմբում: Բնորոշ ե և այն, վոր ամենից ավելի ապահովված խմբերում առանձին զարկ ե սպանում ժամանակին բանվորների վարձակալությունը (բատրակների), այն ինչ ցած խմբերում ամենից շատ տարածված ե բանվորների վարձակալությունն առանձին աշխատանքների համար: «Այդ փաստը, —կարդում ենք Վ. Ի. Լենինի նույն գրվածքում՝ պարզ ցույց ե տալիս, վոր գյուղացիության բարձր խմբերում առաջնում են իսկական բատրակյին տնտեսություններ, վորոնք հիմնվում են վարձու աշխատանքի մշտական ոգտագործման վրա. վարձու աշխատանքը տևում ե ամբողջ տարին, հավասարաշափ տեղի յե ունենում տարվա բոլոր յեղանակներին և հարավությունն ե տալիս, չվարձել ամելի թանդ ե զինացագանք պատճառող որավարձ բանվորներ»*:

Քերված որինակը ցույց ե տալիս, թե ինչպիսի նուրբ գործիք ե գառնում խմբական աղյուսակն այն տնտեսագետի ձեռքում, վորը լիովին տիրում ե վիճակագրական աշխատանքի ձերը:

ԿՈՄԲԻՆԱՑԻՈՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.

Յերկույթը բացատրելու—յերկույթների միջև յեղած կապը պարզելու նույն ինդիքները զնում ե իր առաջ մի ուրիշ տիպի աղյուսակ, վորը կոչվում ե կոմբինացիոն: Կոմբինացիոն աղյուսակի ամենաբարձր տեսակը կունենանք այն գեպքում, յեթե հիմքնողությունները խմբական աղյուսակը ե նրա յենթակայի. յուրաքանչյուր խումբը բաժանենք իր հերթին յենթախմբերի:

Այդ տեսակ աղյուսակի որինակ ե հետևյալ №-7 լրդ աղյուսակը:

ԳԱՐԱՆԱՑԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆՆԵՐԻ ՄԻԶԻՆ ԲԵՐՔԸ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՑ—ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՑԱՆՔԻ ՏԱՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ.

Աղյուսակ №—7
(կոմբինացիոն)

Կուլտուրների անունը.						
Ընտեսությունների խմբավորումն ըստ անասունների քա- նակի (խոշոր):	Ընտեսությունների խմբավորումն ըստ ցանքի տարածու- թյան:	Ընդհանուր կարգ:	Գարել կարգ:	Կարտոֆիլ կարգ:	Լոլիկ կարգ:	Սիրու
Սիրին ըստ խմբի Մինչև 10 հ. ցանքունեց. 1, 1—2, 0 ցանքունեցող 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի	Սիրին ըստ խմբի Մինչև 10 հ. ցանքունեց. 1, 1—2, 0 ցանքունեցող 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի	Սիրին ըստ խմբի Մինչև 1, 0 հ. ցոր. ունեց. 1, 1—2, 0 " " " 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի	Սիրին ըստ խմբի Մինչև 1, 0 հ. ցոր. ունեց. 1—2 զլուխ անասուն (խոշոր) ունեցողները:	Սիրին ըստ խմբի Մինչև 1, 0 հ. ցոր. ունեց. 1—2, 0 " " " 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի	Սիրին ըստ խմբի Մինչև 1, 0 հ. ցոր. ունեց. 1—2, 0 " " " 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի	Սիրին ըստ խմբի Մինչև 1, 0 հ. ցոր. ունեց. 1—2, 0 " " " 2, 1—3, 0 " " " 3, 1—4, 0 " " " 4, 1—5, 0 " " " 5—ից ավելի

*—Վ. Ի. ԼԵНИՆ—«Развитие капитализма в России».

Նյութի խմբավորման հիմք և այստեղ ընդունված անտեսությունների խմբավորումն ըստ անասունների քանակի: Ապա այդ խմբից յուրաքանչյուրը բաժանված է յենթախմբի ըստ ցանքի տարածության: Այստեղ զուգորդված են յերեսույթի յերկու հատկանիշ—ցանքի տարածությունը և անասունների քանակը, այդ պատճառով աղյուսակը կոչվում է զուգորդական—կոմբինացիոն:

Կոմբինացիոն տախտակի խնդիրն եւ պարզել բարդ յերեսույթի մի քանի կողմերի միջև յեղած փոխադարձ կախման փաստը (մեր բերած որինակում—վորչափով բերքի բարձրությունը կախված է ունեցած անասունների քանակից և ցանքի տարածության չափից):

Թե խմբական և թե կոմբինացիոն աղյուսակների հիմնական իմաստն այն ե, վոր նրանք նպաստում են մանրամասն վերլուծման յենթարկել ուսումնասիրելիք հավաքականությունը: Բայց յերբ դիմում ենք բարդ խմբական և կոմբինացիոն աղյուսակների յերբ զիմում ենք բարդ խմբական և կոմբինացիոն աղյուսակների ոգությանը, չպետք ե մոռանանք, վոր վորչափ հավաքականությունը բաժանենք շատ խմբերի, այնքան ավելի մանրամասն նրա մասերը: Ակամա առաջ ե գալիս յերկյուղ, վոր այդպիսի մանր բաժանման հետևանքով ստացվում են խիստ փոքր խմբեր, վորոնք կարող են վերածվել յեղանակի ցուցանիշների:

Մյուս նկատառությունը, վորը հարկադրում է զգուշ վիճել խիստ բարդ կոմբինացիոն աղյուսակներից, այն ե, վոր ամեն մի աղյուսակ պետք ե հարմար լինի դիտելու համար: Յերբ անտես ենք առնում այդ կանոնը, ստանում ենք այնքան ընդարձակ ու բարդ աղյուսակ վորը վոչ թե պարզում ե ուսումնասիրելիք հավաքականության բնույթը, այլ դժվարացնում է այդ խնդիրը:

Անցնենք վիճակազրական աղյուսակների վերին վերսագրի (վիճակազրական ստորագրական) կազմելուն: Ամենից առաջ պետք ենկատել, վոր ինչ ասել ենք կողքի վերնագրի մասին, նույնը կարելի յե կիրառել և վերին վերնագրի նկատմամբ:

Աղյուսակի վերին վերնագրը ճիշտ նույնակես կարելի յե խմբագրել զանազան մանրամասությամբ:

Մեր բերած որինակներում աղյուսակների վերին վերնագրերը պարունակում են հավաքականությունների պարզ հատկանիշներ առանց խմբավորումների. այն ինչ այստեղ ևս կարելի յե հատկանիշները խմբավորել, բաժանելով յենթախմբերի:

Այդպիսի աղյուսակների որինակները են 8 և 9 աղյուսակները:

X ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱԲԵՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՅՈՒՂԵՐԻ.

Դյուզերի անունը.	Տնտեսությունների թիվը.	Նրանց ազգաբնակությունը.		
		Տղամարդ.	Կին.	Բնդամենը.

X ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱԲԵՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՅՈՒՂԵՐԻ ՅԵՎ
ՏԱՐԺՐԱՅԻՆ ԽՄԲԱԿՈՐՄԱՆ.

ԳՅՈՒՂԵՐԻ ԱՆՈՒՆԸ.	ՏՆԵԱ. ԹԻՎԸ.	ՆՐԱՆՑ ԱՆԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.				
		Տղամարդ.	Կին.	ԲՆԴԱՄԵՆԸ.	Տղամարդ.	Կին.

Յերկու աղյուսակներում տարբեր հավաքականություններին (ավագ շրջանի գյուղերին) վերադրվում է միևնույն հատկանիշ՝ ազգաբնակության քանակը ըստ սեռի: Բայց 9-րդ աղյուսակում այդ հատկանիշը բաժանվում է յենթախմբերի (ըստ բանվորական ուցքի): Մենք կարող ենք այդ յենթախմբերից յուրաքանչյուրը նորից բաժանել մասերի ըստ զբաղիտության, մայրենի լեզվի և այլն:

Բաժանման այդ պրոցեսը կատարյալ նույնն ե, ինչ վոր տեսանք կողքի վերնագրերը կազմենիս:

Յերեքն աղյուսակի վերին վերնագրի բարդանում է նրանք, վոր այլտեղ բացի հավաքականության հատկանիշները թը վելուց, զնում են նաև այնպիսի սյունյակներ, վորոնց նպատակն

և հաշվել այն որյեկտները, վորոնք ունեն այս կամ այն հատկանիցը: Այդպիսի աղյուսակի որինակն և №—10 աղյուսակը

Աղյուս. №—10

Խ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԱԶԴԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՑՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎԱՐՄԱՍԻ ՀԱՄԱԳՈՐԾՄԱՍԻ ՀԵՌՔԵՐԻ

ԳՅՈՒՂԵՐԻ ԱՆՈՒՆԸ.	Յերկու սեփ՝ շնչերի թիվը.		Տնտեսությունների թիվը.
	Բանվարդական տա- լիքություն,	Կանոնադրական տարրքություն:	
	Կանոնադրական տա- լիքություն:	1-աշխ., ձեռք ունեցի-	
	Կանոնադրական տա- լիքություն:	2-աշխ., ձեռք ունեցի-	
	Կանոնադրական տա- լիքություն:	3-աշխ. " "	
	Կանոնադրական տա- լիքություն:	4-աշխ. " "	
	Կանոնադրական տա- լիքություն:	5-աշխ. " "	
	Կանոնադրական տա- լիքություն:	5-ից ավելի " "	Տնտեսությունների ըստ բարեկարգության

Յերեքն աղյուսակը բարդանում և նրանով, վոր թե յենթական և թե ստորոգյալը միաժամանակ բաժանվում են յենթախմբերի, վորոնք տարբերվում են միմյանցից իրենց ներքին բնույթով: Դրանով ստացվում է կոմբինացիոն աղյուսակի մի այլ տեսակը:

Չըրենք այլևս որինակ, թե ինչպես պետք է կազմել վիճակագրական աղյուսակների վերնազդերը: Վիճակագրերը, նայած իր ձեռքի տակ յեղած կոնկրետ նյութին և իր առաջ դրած կոնկրետ ինդիքներին, կարող են յուրաքանչյուր առանձին դեպքում կազմել այս կամ այն ախտի վիճակագրական աղյուսակը: Այդ նկատառումով այլևս կանոն չենք առնում ավելի մանրամասն չափով, աղյուսակներ կազմելու վրա, միայն մի անդամ եւ ընդդենք, վոր վերնազդերի խմբավորման նպատակն եւ ավելի մանրամասն վերլուծության յենթարկելու ուսումնասիրելիք հավաքականությունը և նրան բնորոշող հատկանիշները:

Վիճակագրական աղյուսակների մասին պետք է ասել հետևյալը:

Այդ աղյուսակները յերեքն պարունակում են միմիայն բացարձակ թվեր, յերեքն միմիայն հարաբերական թվեր և յեր-

թեմն թե մեկը և թե մյուսը, այսինքն՝ ունենում են այունյակներ թե բացարձակ թվերն ամփոփելու և թե հարաբերական թվերը հանելու:

Վիճակագրական աղյուսակներ կազմելու հիմնական ձևերը վերջացնելու համար պետք է մի քանի խոսքով կանգ առնել այն անհրաժեշտ պայմանների վրա, վորոնց պահպանության դեպքում միայն վիճակագրական աղյուսակը կարող է հարմար լինել գործնականապես ոգտագործվելու: Անհրաժեշտ է հիշել, վոր վիճակագրական աղյուսակի ինդիքն և տալ ուսումնասիրելիք հավաքականության պարզ պատկերը: Այդ ինդիքն իրագործելու համար անհրաժեշտ է:

1) վոր աղյուսակը լինի ճիշտ դիտելի, այսինքն, վոչ խիստ մեծ (ավելի լավ և տալ մի քանի առանձին աղյուսակներ, քան ստեղծել սավանները):

2) վոր թվական տվյալները դասավորվեն աղյուսակի մեջ վորոշ սիստեմով: Հարկավոր է հիշել, վոր վիճակագրական աղյուսակը մեկ ամրութական նախադասություն և, բարկացած յենթակայից և ստորոգյալից: Անհրաժեշտ է, վորպեսզի ստորոգյալը համապատասխանի յենթակային և չպետք է մեկ աղյուսակի մեջ մտցնել մի քանի յենթակա: Այդպիսի անհիշտ աղյուսակ է հետևյալ №—11 աղյուսակը:

Աղյուս. №—11

ՍԽԱԼ ԿԱԶՄԱԾ ԱՂՅՈՒԽՅԱԿԻ ՈՐԻՆԱԿ.

ԳՈՐԾԱՐԱՆ- ՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ.	ԴԵՐԱՎԱՐԱԿ				
	Բանվարդական միջին թվակա- նություն	Բանվար- դական միջին թվականություն	Բանվար- դական միջին թվականություն	Բանվար- դական միջին թվականություն	Բանվար- դական միջին թվականություն
1	2	3	4	5	6

Այդ աղյուսակում նրա կանոնավորությունը խանդարում են 4—րդ և 6—րդ սյունյակները, վորոնք ըստ եյտթյան նոր յենթակա յեն, իսկ դրանց ստորոգյալը 5-րդ և 7-րդ սունյակներն են: Յեթե այդ աղյուսակը բարեխզնորեն լցնեն, ամենից առաջ նա մեծ ծավալ կստանա: ապա նա բարկացած կինից մի շարք միմյանցից անկախ տողերից (գործածված վառելիքի բանական չի կապվում դազգյանի աշխատանքի հետ և այլն): Այդ քանակը չի կապվում դազգյանի աշխատանքի հետ և այլն): Այդ

ապյուսյակը չի կարելի կարդալ տողերով, վորովհետև այնտեղ կամ քանի միմյանց հետ չհամաձայնեցրած նախադասությունը Տվյալ գեպօւմ ճիշտ կլինի 4-րդ և 5-րդ, ինչպես 6-րդ և 7-րդ սյունյակները վերցնել և կազմել առանձին աղյուսյակներ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՑԱԶՈՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՔՎԱԾ ՆՅՈՒ- ԹԻ ՔՆՆԱԴԱՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ.

Վիճակագրական հետազոտության նյութերի ամփոփմանը պետք է նախորդե հավաքված նյութի քննադատական վերլուծումը: Վերլուծման նպատակն է ջոկել միանգամայն լավորակ տեղեկություններով դրանցված հարցաթերթերն ակնհայտ վատերից: Նյութի քննադատական ստուգման արդյունքը լինում է այն, վոր յերբեմն նյութի վորոշ մասն անպետք են համարում և ամփոփման մեջ չեն մտցնում: այդ գեպքերում սխալ ցուցմունքները կամ ուղղում ե վիճակագրական մարմինը ինքը, յեթե ունենում է հնարավորություն, կամ լրացուցիչ հետազոտություն ե կատարում և լրացնում և այդ բացը: Նյութի քննադատման հմանական ձևերը ցույց ենք տվել նախնթաց գլխում: Բայց այդ ձևերից շատերը, վորոնք պահանջում են նորից հարցեր ուղղել հետազոտվող անձին կամ մարմինն, բնականաբար ստուգման այս բաժանում չեն կարող կիրառվել: Դրա համար պետք է դիմել նյութի քննադատման լրացուցիչ ձևերին:

Ամփոփման յենթակա նյութի քննադատական պրոցեսում վիճակագրական մարմինն ըստ եյության պետք է կատարե այն ժամանակը, ինչ վոր անում ե հարցաթերթը լցնող աշխատանքը, ինչ վոր անում է կարցաթերթը լցնող անձը, քննադատելով ամեն մի պատասխան: Մասնավորապես հարցաթերթի հիմնական սխալները կարելի յե պարզել համար լուրջ հարցաթերթի փոխադարձաբար կատված մասերի պատասխանները միմյանց հետ: Որինակ—յենթաղբենք գործարանը ներկայացրել ե հաշվետվություն իր աշխատանքի մասին մեկ ամսվա ընթացքում: այսուղե կարելի յե համեմատել գործադրած հումույթի քիչ քանակը, արտադրած ապրանքի քանակի հետ, աշխատած մարդութիւնը բանվորների թիվը բանվորների թիվը հետ և այլն: Այն գեպքում, յերբ ստուգմում ե պարբերաբար կատարվող հետազոտման նյութը, որինակ ամսական հաշվետվությունները, շատ ոգտակար ե տվյալ բաժանի նյութը համեմատել նախորդ բաժանի նյութի հետ ու պարզել՝ համապատասխանում են արդյոք կատարված փոփոխությունները միմյանց, վորոնք պարզաբանում են նույն յե-

րեույթի զանազան կողմերը: Որինակ—յեթե գործարանի վորեկ ամսվա հաշվետվության մեջ նկատում ենք արտադրանքի բարձրացում, իսկ հումույթի քիչ գործածում, ապա այդ հիմք է տալիս կասկածելու, վոր պատասխանները սխալ են: Յենթագրենք տեքստի գործածում մեկ ամսում գործածել և 150 տոնն բամբակ և դրանից պատրաստել և 140 տոնն թել: յերկորդ ամսում ըստ հաշվետվությունների գործածվել և 140 տոնն բամբակ և պատրաստվել և 170 տոնն թել: Պարզ է, վոր այդ տեղեկությունները չի կարելի ճիշտ համարել: Նախ՝ կասկածելի յե այն փաստը, վոր խիստ ցածրացել և գործածված հումույթի քանակը, բարձրացել և պատրաստված արտադրանքի քանակը: յերկորդ՝ հնարավոր փաստ չե այն, վոր հումույթի մեկ միավորից ստացվում և ավելի քանակով արտադրանքը: Դրա համար ել կատարյալ հիմք կա ստացված այդ տվյալները համարել անճիշտ կամ հումույթի գործածության վերաբերյալ կամ ստացված արտադրանքի: Պետք ե ընդունել իրեն կանոն, վոր վորակով վատնյութը ամփոփման մեջ չպետք ե մտնի:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ.

Վիճակագրական նյութերի ամփոփումը տեխնիկայի կողմեց վոչ այլ ինչ ե, յեթե վոչ գրանցությունների գումարում: Վորովհետեւ ուսումնամարկելիք հավաքականությունները շատ հաճախ բաղկացած են լինում բազմաթիվ որյեկտներից, վորոնք ցուցակագրության ժամանակ ուսումնամարկում են մի շարք հատկանիշներով, ապա միանգամայն հասկանալի յե, վոր այդ բազմաթիվ տվյալների հասարակ գումարումն անդամ խիստ բարդ գործ ե: Դժվար չե պատկերացներ, թե վորքան բարդ աշխատանք ե մարդահամարք (աղգաբնակության ցուցակագրման) տվյալների ամփոփումն այնպիսի մի մեծ յերկը, ինչպիսին և ԽՍՀՄ-ի կամ նույնիսկ նրախոջոր քաղաքներից մեկի: այդ աշխատանքը, վոր արդեն բարդ ե իր որյեկտների քանակով, հատկապես բարդանում և նրանով, վոր ազգաբնակության ցուցակագրման պլոցեսում յուրաքանչյուր անձի հարցաթերթում նշում են մի շարք հատկանիշներ (մեռը, տարիքը, մայրենի լիզուն, գրադիտությունը, գրագումակը տեսակը և այլն): Շատ բնական ե, վոր նկատի ունենալով այդ դժվարությունն կարիք ե առաջ գալիս այնպես կազմակերպել հաշվետվությունների հաշվետվությունները, վոր մեկ կողմից հեշտացնե գումարման այդ գործողություննը, մյուս կողմից տա անսխալ հանրագումարները:

Վիճակագրական նյութերի հաշվելը կամ ամփոփելը կազմում
են տարբեր կերպով, նայած թե հետազոտման ժամանակ հարցա-
թերթի, վոր տեսակն և կիրառված—քարտը, թե ցուցակը: Քարտի
դեպքում որյեկաների քանակը ամփոփելիս հաշվում են քարտի
թիվը: Ճիշտ նույնպես այն որյեկաները ամփոփելու համար.
վորոնք ունեն այն կամ այն հատկանիշի տարբեր տեսակը, պարզ
է, հաշվում են միայն այն քարտերը, վորոնց միջ գրանցված են
այդ որյեկաները: Որինակ այս կամ այն մայրենի լեզուն ունե-
ցող ազգաբնակության քանակն ամփոփելու համար անհրաժեշտ
է հաշվել այն անձերի քարտերի թիվը, վորոնք տիրապետում են
տվյալ մայրենի լեզվին: Այդտեղից պարզ է, վոր այս կամ այն
հատկանիշը ունեցող որյեկաները հաշվելու համար անհրաժեշտ
է քարտերը դասավորել ըստ այդ հատկանիշի տարբեր խմբում: Այլ խոռ-
օրով քարտերի ամփոփմանը նախորդում է նրանց դասավորումը:

Քարտերի դասավորման պրոցեսը հեշտացնելու համար անհրա-
ժեշտ է քարտերը պատրաստել այնպես, վոր տվյալ հատկանիշի տար-
բեր տեսակը քարտերի դասավորման ժամանակ իսկույն աչքի ընկ-
նի: Քարտերի այդ պատրաստելն ամենից լավ էրագործվում է քար-
տերի նշումով: Քարտը նշել նշանակում է հատկանիշի յուրաքան-
չյուր տեսակի համար քարտի վրա դնել վորոշ նշան (սովորաբար
դնում են տառ կամ թվանշան): Այդ նշումների սիստեմը (շիֆրա)
վտղորոշ լավ մտածում են դարձնում են պարտադիր այն բո-
լոր անձերի համար, վորոնք կատարում են նշումը: Բերենք նյու-
թը նշելու որինակներ մարդանամարի տվյալները մշակելիս: Յեն-
թաղբենք պայմանավորվել ենք հետեւյալ հատկանիշների համար
դնել հետեւյալ նշերը—սեռը: Տ և Կ տառով: մայրենի լեզուն ուռ-
սերենը 1—թվանշով, ուկրայինականը՝ 2. բելուստերենը՝ 3
և այլն: Կուսակցականությունը կե(Բ) անդամների համար—10 և
կոմիերիտմիյության անդամների համար—11, անկուսակցականնե-
րի համար—12 և այլն: Այդպիսով նյութը նշելիս, յերբ հանդի-
պում ենք մեկն, վորը տպամարդ է, ուռս և անկուսակցական,
նրա քարտը նշում ենք այսպես —Տ, 1, 12: Ուկրայինացի կին
կուսակցականը կունենա հետեւյալ նիշը—Կ, 2, 10 և այլն: Մեծ նշա-
նակությունի ունի այն, վոր հատկանիշի նիշերը պարտադիր կեր-
պով գնում են վորոշ տեղում: Դրա համար հանձնարարվում է հենց
քարտի վրա նիշերի համար հատկանիշը հատուկ տեղ, առանձին
գանդակ:

Քարտերի նշելը բավական մանրակրկիտ աշխատանք ե և
պահանջում է մեծ ուշադրություն. զրա համար այդ աշխատանքը
հանձնարարում են կատարել վորակով ավելի բարձր աշխատա-
կիցների: Նախ քան նյութի ամփոփումն, անհրաժեշտ է վերջացնել
բոլոր հատկանիշների նշումը: Նշված նյութը դասավորում են
խմբերով և ապա ամփոփում:

Քարտերի դասավորման ժամանակ սովորաբար հարց ե բարձ-
րանում, ինչ կարգով կատարել դասավորումը, այսինքն վոր
հատկանիշից սկսել: Յենթաղբենք ամփոփում ենք մարդանամարի
տվյալները, վորոնք ներկայացնում են հետեւյալ հատկանիշները—
սեռը, տարիքը, մայրենի լեզուն, զբագիտությունը և զբաղմունքի
տեսակը: Հարց ե բարձրանում, կատարել արդյոք քարտերի դասա-
վորումը և հաշվել նրանց այն կարգով, վորը մենք թվեցինք այդ
հատկությունները, այսինքն՝ հաշվել, վորքան կա աղամարդ և կին
և հետո վորքան մարդ կա այս կամ այն տարիքի (կամ թի ա-
ռանձին—քանի աղամարդ և քանի կին այս կամ այն տարիքի),
հետո հաշվել քանի մարդ տիրում են այս կամ այն մայրենի լեզ-
վին (անկախ սեռից և տարիքից կամ առանձին այս կամ այն
սեռի և յուրաքանչյուր տարիքի համար). Հաշվել արդյոք գրագի-
տությունն առանձին յուրաքանչյուր խմբի համար ըստ սեռի,
տարիքի, մայրենի լեզվի, կամ բոլոր անձերի համար, տալ ընդ-
հանուր գումարը: Այդ բոլոր հարցերը միենույն չեն և ամենից
առաջ աշխատանքի ծավալի տեսակետից: Որինակ յենթաղբենք
մենք հաշվեցինք աղամարդկանց և ապա չխառնելով քարտերը,
տղամարդկանց և կանանց համար առանձին—առանձին հաշվե-
ցինք քանի մարդ տիրում և այս կամ այն մայրենի լեզվին,
գրանից հետո քանդեցինք դասավորումն ըստ մայրենի լեզվի և
հաշվեցինք առանձին տղամարդկանց թիվը և կանանց թիվը առան-
ձին այս կամ այն տարիքում. զրանից հետո քանդելով դասա-
վորումն ըստ տարիքի, վորոշեցինք հաշվել զբագիտությունն ա-
ռանձին այն մարդկանց համար, վորոնք ունեն զանազան մայրե-
նի լեզու—պարզ է, վոր վերջին դեպքում մենք քարտերը նո-
րից խմբավորենք ըստ մայրենի լեզվի, վորը հենց նոր քանդեցինք:
Այս որինակը ցույց է տալիս, թի վորքան լավ պետք է
մտածել հաշվելու սիստեմը և քարտի դասավորման պլանը, վոր-
պեսզի կարելի լինի խուսափել քարտերի ավելորդ դասավորումից
Ընդհանուր կանոնը զրա համար կարելի յէ ձեսկերպել այսպիս—
քարտերի դասավորումը և հաշվելով պետք ե սկսել այն հատկա-

նիշներից, վորոնք ամենից ավելի ընդհանուր են և ըստ նրանց խմբավորման կարող ենք կատարել հետագա բոլոր ամփոփումները, ապա անցնել ըստ այն հատկանիշների խմբավորմամբ, վորոնք ավելի պակաս չափով ընդհանուր են:

Հասկանալի յե, քարտերի այս կամ այն խմբի ամփոփման արդյունքը իսկույն պետք է գրել աղյուսակում: Յեթե հաշվելիս հավաքականությունը բաժանվում է խմբերի, ապա գումարում են այդ խմբերը և ստացած հանրագումարը համեմատում են ընդհանուր հանրագումարի հետ: Կարելի յե պատահել, վոր հանրագումարները չհամապատասխանեն միմյանց, այդ առաջ ե գալիս նրանից, վոր հաշվելը սխալ են կատարել կամ հենց հետազոտության ժամանակ չեն գրանցել այս կամ այն հատկանիշը: Առաջին գեպքում նորից են ստուգում ամփոփումը: Յերկրորդ գեպքի որինակ ե այն, յերբ գրանցման ժամանակ մոռացել են որինակ այս կամ այն անձի տարիքը դնել: Այդ գեպքում պետք ե ստեղծել առանձին խումբ այս վերնագրով—«Վորոնց տարիքը հայտնի չե» «վորոնց մայրենի լեզուն հայտնի չե» և այլն:

Ետ ավելի քարտ ե այն նյութերի ամփոփումը, վորոնք հավաքված են վոչ թե քարտի, այլ ցուցակի սիստեմով. այստեղ չի կարելի վոչ նշում կատարել և վոչ դասավորում, վորովհետև մեկ հարցաթերթի վրա գետեղված ե բոլոր տեղեկությունները: Իրա համար այդ գեպքում պետք ե փնտրել ամփոփման այլ յեղոնակը:

Վիճակպական նյութի ամփոփման ձևերից մեկն այն ե, յեթե նյութերը հավաքվել են ցուցակի ձևով, վոր տեղեկություններից հավաքվելից յուրաքանչյուր որյեկտի համար արտադրում են մերը ցուցակից յուրաքանչյուր որյեկտի վրա: Այս քարտը կոչվում է Փիշկան բրենից ներկայացնում ե գելած կամ բոլորին մաքուր քարտ, վորի վրա պայմանական կետերով և պայմանական նշաններով (վորոնք կիրապում են քարտը նշելիս) յուրաքանչյուր որյեկտի համար նշանակում են հատկանիշի այս կամ այն տեսակը, վոր ունի տվյալ որյեկտը: Տվյալները Փիշկայի վրա տեղափոխելով, ստանում ենք նույն քարտային սիստեմը, վորի ամփոփման համար կիրառում են բոլոր այն ձևերը, վոր նկարագրել ենք վերելում: Ֆիշկայի սիստեմը կիրառելիս անհրաժեշտ է մեծ ուշագրություն՝ Փիշկաները լցնելիս: Ֆիշկայի ամենալավ ձեզ կլինի այն վորի վրա կրկնված են հարցաթերթերի հարցերը կամ ցույց են տված հարցերի համարները:

Ֆիշկաների սիստեմի փոխարեն յերբեմն կիրառում են պայմանական նշանակումների սիստեմ, այսինքն ավյալները նշում են կետերով, գծերով և այլ պայմանական նշաններով: Այդ սիստեմի եյությունը պարզենք, հետեւյալ որինակով. յենթադրենք ամփոփում ենք նույն մարդահամարի տվյալները, սակայն հավաքված ցուցակի ձևով, յերբ յուրաքանչյուր անձի վերաբերյալ տվյալները ընդհանուր ցուցակի մեջ գրանցվել են առանձին տողի վրա, հաշվում ենք այն անձերին, վորոնք ունեն տարրեր մայրենի լեզու: Վերցնում ենք մի թերթ թուղթ, բաժանված առանձին տողերի. այդ տողերից յուրաքանչյուրի վրա գրվում է համապատասխան խմբի նիշը: Նայելով ցուցակի յուրաքանչյուր տողին և հանդիպելով այն անձին, վորի մայրենի լեզուն ուսւերեն ե, հաշվային թերթի վրա քաղում ենք գիծ այն տողում, վոր նշանակված ե ուսւերենի համար. յեթե հանդիպում ենք բելոսուսի, գիծը քաղում ենք բելոսուների համար նշանակված տողում: Հետագայում գծերի հաշվելը հեշտացնելու համար, յուրաքանչյուր չորս գծի վրա քաղում ենք 5—րդ գիծը: Գծերի փախարեն կարելի յե կիրառել կետեր, միայն նշանակելով այդ կետերը վանդակվոր թղթի վրա հետեւյալ կարգով, առաջին կետը գնում են վանդակի վերին ձախ անկյունում, յերկրորդ կետը վերին աջ անկյունում, յերրորդը՝ ցածի ձախ անկյունում, չորրորդը՝ ցածի աջ անկյունում, իսկ հինգյերորդ կետի փախարեն միացնում են վանդակի անկյունները ծուռ խաչով:

Այդ սիստեմի անհարմարությունն այն ե, վոր հեշտ և սխալ գել և գեվար և ստուգել, վրա համար գերազավում է ֆիշկաների կիրառումը:

Այն ամենը, ընչ վոր ասել ենք ամփոփման տեխնիկայի մասին՝ վերաբերյում ե այն գեպքերին, յերբ ամփոփում ենք հատուած որյեկտները. բայց վիճակպական նյութերի ամփոփման ժամանակ մենք կարող ենք հանդիպել այնպիսի գեպքերի, վոր ամփոփելու յեն մի շարք թվեր. որինակ—յերբ ուսումնասիրում ենք առանձին գործարաններ, քարտերի վրա գրանցում ենք մի շարք թվական տվյալներ, վորոնք բնորոշում են նրանց աշխատանքի ծավալը հաշվետու զրանցում (բանվորների թիվը, արտադրանքի քանակը, գործածված վառելիքի քանակը և այլն): Ամփոփման խնդիրն ե այդ գեպքում տալ մի խումբ գործարանների աշխատանքի այդ ցուցանիշների հանրագումարները (բանվորների թիվը ընդհանուր հանրագումարը, արտադրանքի ընդհանուր հանրագումարը և այլն):

Ամփոփման պրոցեսը այստեղ արտահայտվում է նրանով՝ կոր գումարելով այդ թվական տվյալները, ստանում ենք հաճախադրումարներ: Գործնական վիճակազրությունն այդ դեպքերի համար ել մշակել են վորոշ ձև՝ հեշտացնելու ամփոփումը: Այդ ձևն այն է, վոր քարտերը դարսում են իրար վրա այնպես, վոր գումարման յենթակա թվերը դասավորվեն շարքով իրար կողք-կողքի և կազմեն անընդհատ ուղղահայաց կամ հորիզոնական շարքի: Վերևում, յերբ խոսում եյինք հարցաթերթ կազմելու մասին, ասել ենք, վոր քարտերի այդ կերպ դասավորումը նախատեսնելով, յանկանալի յի թվական մեծությունների համար նշանակված սյունյակները այնպես դասավորել, վոր այդ թվական մեծությունները զետեղվեն հարցաթերթերի ծայրամասերում: Պարզ է, վոր նույն սիստեմով պետք է կազմել և ֆիջիկան, վորը կիրառվում է յուցակի սիստեմով դրանցված տվյալների ամփոփման համար:

ԱՄՓՈՓՈՒՄՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՄԻՋԱՅԻՎ.

Վորքան ել լավ կազմակերպված լինի վիճակագրական նյութերի ամփոփումը, նա մեծ աշխատանք և ուժերի մեծ լարում և պահանջում և կարող և տեղի տալ հաշվային մեծ սխալների: Այդ աշխատանքի ծավալը համում է հսկայական չափերի այնպիսի վիճակագրական նյութերի ամփոփման ժամանակ, ինչպես են մարդահամարի հարցաթերթերը, վորոնք ընդգրկում են յերկը ամբողջ տերիտորիան: Շատ բնական է, վոր տեխնիկական միտքը վնասել ու գտել և միջոցներ այդ գործի մեջ կիրառելու մեքենայի աշխատանքը:

Ներկայում կան հաշվային մի քանի տեսակներ, վորոնք ելեքտրական եներգիայի ոգնությամբ ավտոմատ կերպով ամփոփում են վիճակագրական նյութերը: Մեր խոշոր վիճակագրական հիմնարկությունների աշխատանքներում ԽՍՀՄ-ի Պետական ժողովրդանտեսական հաշվառման սեկտորը Ճ.Հ.Փ.Կ և ուրիշները գործ են ածում ԳՈԼԵԲԻԾ և ՊԱՌԵԲԻՄ մեքենաները: Այդ յերկու մեքենան տարբերվելով միմյանցից միայն մի քանի մանրամասությամբ, ներկայացնում են յերեք առանձին մեքենաների կոմբինացիա, վորոնք կատարում են վիճակագրական ամփոփման հետեւյալ առանձին աշխատանքներ:— տվյալները գուրս են թերում ֆիջիկայի վրա, խմբավորում են ֆիջիկաները և ամփոփում են տվյալները Այդ հաշվային մեքենաների վրա կատարվող էքստական աշխատանքները հետեւյան են: Ամենից առաջ տեղե-

կությունները վիճակագրական հարցաթերթերից տեղափոխում են հաշվային քարտի վրա: հաշվային քարտը հետեւյալ տեսակի քարտ է (տես №—104 հջ): Յեթե վերևից վար նայենք, կտեսնենք արդ քարտի վրա թվանշանների միմյանց կատարյալ նման քառասուն հինգ սյուն, դրանք տասներորդական սիստեմի թվանշաններ են (գերոյից մինչև իննը ներառյալ): Այդ թվերի ամենացած շարքը ներկայացնում է սյունների համարները:

Թվական տվյալների քարտի վրա տեղափոխելու պրոցեսը, ինչպես ասում են պերֆորացիայի պրոցեսը, բաղկացած է հետեւյալ տասնձին աշխատանքներից: Ամենից առաջ նախարոք նշում են քարտը բաժանելու ուղղահայաց զծերով մասերի: Դրանով քարտը կարծես թե բաժանվում է մի շարք սյունյակների, վորոնք պարունակում են թվական սյունների տարբեր քանակ, նայած թե վորքան մեծ թիվ կարող է պատահել յուրաքանչյուր սյունյակում: Հետազայում քարտի այդ սյունյակներից յուրաքանչյուրում բաց են անում անցք, վորը համապատասխանում է այս կամ այն թվանշանին: Յենթաղենք այսպիսի սյունյակի համար հատկացված և յերկու սյուն կամ շարք և այստեղ պետք է զրել 12—թիվը: Դա կատարում են այսպիս—առաջին սյունների մեջ, այսինքն տասնաշին շարքում տասնձին գործիքով պերֆորատորի մակում են 1—թիվը, յերկորդ շարքում 2—թիվը:

Յենթաղենք, աղյօւսակի 2-րդ սյունյակում, վորից կատարվում և պերֆորացիա (թվերի տեղափոխում), կա հինգ թվանշանյին մեկ թիվ՝ 31200: Պարտի վրա այդ թվի համար հատկացված են 3—7 սյունները (շարքերը): Թի պերֆորատորը ինչպես և տեղափոխում այդ թիվը, յերկում է և քարտի որինակի վրա:

Պերֆորատորը, վորի միջոցով թվական տվյալները գրանցվում են հաշվային քարտի վրա, մի գործիք և, վոր իր արտաքին տեսքով հիշեցնում է զրոյի մեքենա: Նա ունի կլավիատուրա, բայց վոչ տառերով, այլ թվանշաններով: Պերֆորացիայի պրոցեսը կատարվում է այսպիս—ամեն անգամ սիփում են համապատասխան կլավիչին, վորը ծակում է հաշվային քարտը: (Կցվում է ծակած նշանները):

Քարտերը ծածկելուց հետո, նրանց դասավորում են առանձին մեքենայի միջոցով, վորը կոչվում է տեսավոր և պատճենագիր մեքենա: Նա քարտերը աշխատելիս բաժանում է զմանդան խմբերի, ոյսինքն՝ կատարում է քարտերի դասավորումը և հաշվում է նրանց քա-

Նակը յուրաքանչյուր խմբում։ Մարդկային ձեռքի աշխատանքն այստեղ միայն այն է, վոր քարտերը դնում ե մեքենայի մեջ։ Անցած բոլոր գործողությունը կատարում ե մեքենան՝ ելեկտրական ուժով։

Հաշվային աշխատանքի հետևյալ և վերջին սատրիան և քարտերի հաշվին բատ խմբերի և անցկացնելը հանրագումարային աղյուսակի մեջ։ Այս գործողությունը կատարում է այսպես կոչված ՏԵԲՈՒԼՅԱՑԲՈՐԸ։

Սա իր կազմով ներկայացնում է հաշվային և գրող մեքենայի կոմքինացիան։ Մարդկային աշխատանքի գերն այստեղ այն է, վոր քարտերը դնում ե մեքենայի մեջ։ Արդյունքը լինում է ուղղաձայնական աղյուսակ։

Այդ և ավտոմատ հաշվային մեքենաների աշխատանքի ընթացքը։

Նրանց կիրառման առավելությունը լիակատար պարզ և—ամփոփման աշխատանքը կատարվում է արագ, անսխալ և եժան։ Մակայն այդ մեքենաները շատ թանկ են և մեզանում չեն պատրաստվում։ Նրանց ձեռք բերելը նպատակահարմար և միայն այն դեպքում, յեթե աշխատում են լիակատար բենավորությամբ, իսկ այդ բանը հնարավոր է այստեղ, վորակ մշտկում են վիճակարական հսկայական նյութեր։

Վիճակարական նյութերը ցուցակի սիստեմով հավաքելիս ասել ենք, վոր այդ սիստեմն առավելաւթյուն ունի, յեթե նյութերն ամփոփվում են մեքենայի միջոցով։ Այդ դեպքում նրա սուպերվալությունն այն է, վոր հեշտանում է պերֆորացիայի պրոցեսը։ Են աշխատակցին, վորը կատարում է այդ աշխատանքը ափելի հարմար և ունենալ իր առաջ վոչ թե քարտերի մասսան, այլ ընդհանուր ցուցակ, վորի տվյալների համաձայն նա ծակում է հաշվային քարտերը այնպես, ինչպես մեքենագրուհին ձեռագրից տպում է մեքենայի վրա։

Քարտերի փոխարինելը մեկը մյուսով պերֆորատորի մեջ կատարվում է մեխանիկորեն։ Հաշվային մեքենաների թանգ լինելը, արգելք են նրանց լայն տարածմանը։ Այժմ վիճակարական աշխատանքներն ամփոփվում են սովորաբար ոռուստիկան համբէչների ոգնությամբ։ Վերջին տարիներս բավական լայն տարածված ե հաշվային աշխատանք կատարելու համար այսպես կոչված ԿՈՄՊՈՍԻՏ ԵՏՏՐ—հաշվային գործիքը։ Նա ունի առանձին կլավիատուրը, թվաբանական գործողությունները կատարում են,

իսկելով լլավիշներին։ Կոմպոսիտարով ավելի արագ և կատարվում աշխատանքը, քան համբէչների միջոցով, իսկ բազմապատկման և բաժանման գործողությունները նա ավելի արագ և անում, քան արիֆմոմետրները։ Արիֆմոմետրները, վորոնք շինվում են Խորհրդային Միության մեջ, ամենից շատ են տարածված։ Ավտոս, վոր մինչև այժմ կոմպոսիտը չեն արտադրում ԽՍՀՄ-ի մեջ։ այդ բանն արգելք և նրանց լայն տարածմանը։

Ներկայիս կառավարչական բարձր որգանները վորոշում են հանել, կարճ ժամանակում բարդ հաշվային մեքենաների արտադրությունը կազմակերպել ԽՍՀՄ-ի մեջ։ տնտեսական մարմինների վրա պարտականություն ե դրված միջոցներ ձեռք տունել ամենաարագ կարգով իրագործել այդ վորոշումը։

ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՅԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՍԻՄՑԵՄԸ

Մեծ մասշտաբով կատարված վիճակարական աշխատանքների ժամանակ ընդգրկվում է խոշոր տարածություն՝ բաղկացած մի քանի շրջաններից։ հարց և ծագում, վորոնք կատարել ամփոփումը, կենարոնացնել արդյոք նյութը կենարոնական վիճակարական ապարատում, վորին պատկանում է հետազոտության ընդհանուր կազմակերպումը, թե ամփոփումը կատարել կենարոնական ապարատի տեղային մարմիններում, վորոնց անմիջական դեկավարությամբ տարվում է վիճակարական հետազոտումը Առաջին դեպքում կունենանք կենարոնացած ամփոփում, յերկրորդ դեպքում—ապակենարոն։ Պարզ է, ամբողջ յերկրի մասշտաբով ընդհանուր հանրագումարները ստանալու համար անհրաժեշտ ե շրջաններում կատարված ամփոփումները հավաքել կենարոնն և այստեղ կատարել լրացուցիչ ընդհանրացնող ամփոփում։ Կարելի յե թվել մի շարք պատճառարանություններ ի հոգուա ամփոփման, ինչպես ապակենարոնացման, նույնպես և կենարոնացման սիստեմի։

Ամփոփման ապակենարոնացման ձեր պաշտպանելու առաջին հիմքը այն է, վոր տեղային մարմինների շահերը պահանջում են, վորպեսզի իրենց տրամադրության տակ լինեն իրենց ըջանի վիրաբերյալ ուսումնասություններ։

Շատ բնական է, որինակ, վոր ժողովրդական տնտեսության շրջանային խորհուրդը պետք է տեղեկություններ ունենալ իր շրջանի արդյունարերության աշխատանքի մտաին։ Մանա-

վանդ գործառնական աշխատանքի պայմաններում այդ տեղեկությունները պետք ե ստացվին շատ արագ քանի չեն կորցրել իրենց գործնական նշանակությունը: Այդ բանն ամենից հեղտ և ապահովել, կատարելով նյութերի ամփոփումը շրջանում:

Յերկրորդ նկատառումը հոգուտ ապահենարոնացման ամփոփման այն ե, վոր ամփոփման պրոցեսում շատ հաճախ կարելի յև հանդիպել տվյալ շրջանին հատուկ յերեսութիւն այնպիսի առանձնահատկությունների, վորոնք կարող են անհայտ լինել կենտրոնական մարմինն:

Յերեք զինակագրական հետազոտությունը կատարվում է ամբողջ յերկրի մասշտաբով, կենտրոնական մարմնի վոչ մի հրահանգ չի կարող նախատեսնել բոլոր այն գործնական դժվարությունները, վորոնք ծագում են հետազոտությունը կատարելի և տեղերում, վորովետև անհնարին և նախատեսնել այն բոլոր բազմազան կոնկրետ պայմանները, վորոնց մեջ կարող ե լինել հետազոտվող հսկայական յերկրի գանազան անհյուններում: Այդ և պատճառը, վոր անհրաժեշտ ե լինում զինակագրական հետազոտությունը զեկավորող տեղային մարմիններին տալ իրավանք ինքնուրույն կերպով լրացնել և գուցե, նույնիսկ մասնակի փոփոխության յենթարկել համապետական պլանը: Միանգումայն հասկանալի յե, վոր նման պայմաններում ամենից ավելի նպատակահարմար և զինակագրական նյութի ամփոփումն ևս հանձնարել տեղական մարմիններին, վորոնք զեկավարել են զինակագրական հետազոտությունները շրջանում: Միայն այդ մարմինները կկարողանան հեշտ պարզել հում նյութի տեղային առանձնահատկությունները կամ կարեցնել այն՝ կենտրոնի կողմից սահմանված աղյուսակներում:

Բայց կան և վոչ պակաս ծանրակիու նկատառութեր հոգուտ կենտրոնացած ամփոփման: Ամենից տուշ անհրաժեշտ և նկատի ունենալ, վոր ընդհանուր հանրագումարներն ամբողջ յերկրի մասշտաբով ամենից արագ կարող և տալ կենտրոնացած ամփոփումը չասկանալի յե, վորոշ հանգամանքների պատճառով տեղային առանձին մարմիններ կարող են իրենց ամփոփութերն ուշ ուղարկել կենտրոն: Բայց բավական և վորևէ շրջանից չըստանալ ամփոփում, կենտրոնական մարմինն անկարող կլինի կազմել ընդհանուր ամփոփում: Այլ խոսքով ամփոփման ապակենտրոնացված սիստեմի զեկավոր կենտրոնական զինակագրական մարմնի աշխատանքի տեմպը վորոշվում է տեղական ամենաթույլ մարմ-

նի աշխատանքի տեմպով: Այն ինչ, յեթե հետազոտման վորոշոյի կատարելի վերաբերյալ տեղեկություններ բացակայում են, այդ բացն եյտան աղդիցություն չի ունենա ամբողջ ամփոփման վրա:

Մյուս նկատառումը հոգուտ կենտրոնացած ամփոփման այն ե, վոր միայն այդ սիստեմի գեպֆում կենտրոնական մարմինը հանրավորություն ունի ստուգելու ամփոփման հանրագումարը: Բնդիակառակը, յեթե ստանում է կենտրոնական մարմինը տեղային մարմնից վոչ թե սկզբնական նյութը, այլ նրա ամփոփումը, վոչ միայն նա հնարավորություն չունի ստուգելու նյութը, այլ և զրկված է հնարավորությունից բացատրել այս կամ այն հանրագումարի մեծությունը, վորովետենի այդպիսի բացատրության համար անհրաժեշտ է դիմել անհատական ավյաններին:

Յերրորդ նկատառումը հոգուտ կենտրոնացած ամփոփման այն ե, վոր կենտրոնական ապարատն ամենից լավ կահավորված ե, ունի վորակյալ անձնակազմ ու տեխինիկական միջոցներ, հետեվագեն և ամենից լավ կարող և կատարել նյութի թե քննադատությունը և թե ամփոփումը:

Ընդունելով այդ բոլոր պատճառաբանությունները հոգուտ կենտրոնացած ամփոփման, սուկայն անհրաժեշտ և հաշվի տանել տեղային մարմինների շահերը, վորոնք պահանջում են ավյալներ ունենալ իրենց ցրջանների վերաբերյալ: Ալդ հանգամանքը սոխուալ և տանական զինականի կոմպրուսիսի—զիջողության, կամ զուգահեռաբար զինակագրական տեղեկություններ են հավաքում թե կենտրոնի և թե տեղերի համար, գրանցելով յուրաքանչյուր հարցաթերթ յերկու որինակից—մեկը կենտրոնի համար, մյուսը ցրջանի: Կամ կատարում են մասնակի ապակենտրոնացած ամփոփում, այսինքն նախական ամփոփութեները կատարում են տեղերում, ապա նյութն ուղարկում են կենտրոն, մանրամասն ամփոփման համար:

Հոգուտ այդ խորը սիստեմի, խոսում է այն հանգամանքը, վոր նյութի խմբավորման վորոշ տեսակներ տեղային մարմինների համար առանձին հետաքրքրություն չունեն, վորովետենի յեթե այդ նյութն այդ տեսակ խմբավորում ենք շրջանի մասշտաբով, կարող են խմբի մեջ լինել հատահատ որյելուներ:

Այն ինչ այդ խմբավորութեներն ամբողջ յերկրի մասշտաբով կատարելիս կարող են հայտնաբերել ուսուեմնապիրելիք հավաքականության վորոշ միանգամայն որինաչափ կառուցվացքը:

Ամփոփման կենտրոնացած սիստեմի ողակարության պայ-

ծառ որինակ տալիս և մեր արզյունաբերական վիճակագրության փորձը: Մինչև 1931-թիվը ժողովնախորհի վիճակագրական մարմինն արդյունաբերության աշխատանքի մասին հաշվետու տեղեկություններ ստանում եր անմիջապես գործարաններից և ֆաբրիկաներից և մշակում եր այդ տեղեկությունները կենարու նացած կարգով:

Այդ կարգը հնարավորություն եր տալիս շատ արագ կերպով ունենալ հանրագումարային տվյալներ արդյունաբերության աշխատանքի մասին: Սկսած 1931-թվից ԽՍՀՄ-ի ժողովնախորհի վիճակագրական մարմինն անցավ ամփոփման ապակենտրոնացման սիստեմին. հրաժարվեց ստանալ հաշվետու տվյալներ գործարաններից իր հասցեյով և ստանում եր միայն ամփոփումներ արդյունաբերական միավորումներից: Աշխատանքի այդ փոփոխության առիթն այն եր, վոր ցանկանում եյին գործարանների հաշվեավությունն ուղարկել ափելի քիչ կազմակերպությունների, վորովհետեւ այդ հաշվետվությունները բացի ժողովնախորհին ուղարկելուց, ամպայման պետք ե ուղարկելուն և այն միավորումներին, վորոնց կազմի մեջ եյին մտնում այդ գործարանները: Փորձը ցույց տվեց, վոր ամփոփման ապակենտրոնացման կարգը հասցնում ե այն բանի, վոր կենտրոնական մարմինը չի կարող ամփոփում կատարել մինչև չստացվեն հաշվետվություններ բոլոր միավորումներից և վորովհետեւ վերջիններին մեջ լինում են միշտ ել անձատապահներ, ապա այդ բանն արգելք դարձավ հետաձգել ամփոփումներն ավելի քան յերեք ամսով, հակառակ այն ժամկետի, յերբ կատարվում ե ամփոփումը կենտրոնացած կարգով:

ՅՈՒԹՅՈՒՆՔՆԵՐ Յ-ԲԴ ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Զեռնաբեկիս Յ-ԲԴ գլուխը ծանոթացնում ե ուսանողներին վիճակագրական ավարտված աշխատանքի յերկրորդ շրջանի հետ—վիճակագրական հետազոտության նյութերի ամփոփման հետ:

Վորովհետեւ վիճակագրական աշխատանքը հետազոտական կարգի աշխատանք ե և նյութերի ամփոփումը չի կարելի համարել հասարակ մեխանիկական աշխատանք, ապա սիստեմի և պլանի հարցերը, վորոնք բղիում են հետազոտության խնդիրներից, բոլում են առաջին տեղը:

Ուսանողը պետք ե լավ պարզի իր համար վիճակագրական աղյուսյակի զանազան ձերի նշանակությունն ու իմաստը, քննի և հասկանալ աղյուսյակի բազկացուցիչ մասերը: Առանձին ուշա-

դրություն պետք ե դարձնել խմբական աղյուսյակի ճանաչողական նշանակության վրա: Այդ նպատակի համար հանձնարարվում է ծանոթականալ Վ.Ի. Լենինի ամենքին մատչելի աշխատանքի «Կեղծածը, լիքությունը ԶԱՐԴԱՅՑՈՒՄԸ» պահանջանարկության որինակելի աղյուսակներինետ: Դետք ենկատի ունենալ, վոր վիճակագրական աշխատանքը գաղատական աշխատանքը, վորպես ճանաչողական աշխատանքի գործակի կրում և իր վրա իր հեղինակի գառակարգային գաղափարախուսություններուն կամաց աղյուսական աշխատանքը:

Վիճակագրական ամփոփման մեխանիկայի հարցը՝ մշակելիս պետք ե ուշադրություն գարձնել, վոր անհրաժեշտ և այդ աշխատանքի ծրագիրը կազմել խիստ մտածված ձեռվէ: Ուժերի մինիմալ գործադրությամբ ստանալ աշխատանքի մաքսիմալ և արագ եփքեկտը—ալդ և աշխատանքի այդ շրջանի ճիշտ կազմակերպման խնդիրը: Այդ բանը պետք ե լավ յուրացնել, վորպես յուրացնելու պահանջուրը անձ կարողանա հաշվի առնել այն գործնական ցուցանունները, վոր բերված են զանազան գործնական ամփոփումները:

ՅՏՌԴԻ ԶԱՐԵԲԸ Յ-ԲԴ ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Ինչու վիճակագրական նյութերն ամփոփում են վիճակագրական աղյուսյակի միջին:

2. Ինչ մասերից ե բաղկացած վիճակագրական աղյուսյակը:

3. Բերեք հասարակ աղյուսյակի մի որինակ և գրեք նրա բովանդակության հիմնական մոմենտները:

4. Բերեք խմբական աղյուսյակի որինակ լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքից և գրեք ամենաեյական մոմենտները, վոր պարզում ե այդ աղյուսյակը:

5. Ինչ նշանակություն ունեն կոմբինացիոն աղյուսյակները:

ՀԱՇՎԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՈՒԽԱԿԸ ՊԱԼԵԵՐՄ ԱԵՔԵԱՅԻ ՀԱՅԱ.

(Քարտում անցիլ և պերֆորատոր միջնորդ▼)

0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	
▼	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
2	▼	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
3	3	▼	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	
4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4
5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5
6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6	6
7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7	7
8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8	8
9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9	9
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	

▼}B, 4 Աշակերտ ՊԵՐՔՈՒԹՈՒԹԻՒՆ ՃԱԼԱՆԺ ՄԱՐգիսկ հԱ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ց
3

Նախարան

Գլուխ I.—Վիճակագրության և վիճակագրական միթողի հասկացողությունը

5

Յուցմունքներ՝ առաջին գլխի վերաբերյալ

38

Ստուգիչ հարցեր առաջին գլխի վերաբերյալ

39

Գլուխ II.—Վիճակագրական հետազոտություն

41

Յուցմունքներ յերկրորդ գլխի վերաբերյալ

73

Ստուգիչ հարցեր յերկրորդ գլխի վերաբերյալ

75

Գլուխ III.—Վիճակագրական հետազոտություն նյութերի ամփոփումը

76

Յուցմունքներ՝ յերրորդ գլխի վերաբերյալ

102

Ստուգիչ հարցեր յերրորդ գլխի վերաբերյալ

103



Д. САВИНСКИЙ

ОСНОВЫ ТЕОРИИ СТАТИСТИКИ

Под редакцией Ф. А. ПУЗАНОВА
Переводил П. ГАРАХАНЯН

Издание Арм. отделения ЭАЗИФЭНА

Эривань

1933



